



Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

18806

Ը. Հ. 92

231

027.2

-33

27 SEP 2006

Դ. ԼԵՅԿԻՆ

15 JAN 2010

ՀԱՍՏԱՏԱԿԱԾԱՑԻՆ ԱՖՐԻԿԱՆ

ՅԵՎ

ՃՈՐՏՈՒԹՅՈՒՆԸ ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ԴՐՈՇԱԿԻ ՏԱԿ

ԽԾՀՄ ԺՈՂՈՎՌԴՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԱԿ. ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՄՊՍԿՎԱ

1931

30 APR 2013

18806

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1929 թվի հունվարին խորհրդային մամուլի մեջ յերեւանի հեկավ հետևյալ հեռագիրը.

«ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅՈՒՆԸ ԱՖՐԻԿԱՅՈՒՄ»

Պարիզ: Ֆրանսիական Հասարակածային Աֆրիկայի նահանգապետ Անտոնետային նորերս Պարիզումն երև և զսկուցում եր արել կառավարությանը այդ գաղութի բնիկների մեջ տիրող հուզմունքի մասին։ Սանդի գետի ակունքների ռայոնում յերեացել ե մի ինչպոք ու «մարդարե», վորը գրգռում ե ազգաբնակությունը Փրանսիական ոկուզացիայի դեմ... Ապստամբությունը, վոր սկզբում հաջողվել եր խեղճել, նորից բանկել ե ավելի լայն ծավալով։ Միաժամանակ շարժումը սկսվել ե Բանդի քաղաքի ըրջանում, վորտեղ արյունահեղ ընդհարություններ են տեղի ունեցել բնիկների և պատժիչ ջոկատների միջև։

Անցավ ավելի քան մի տարի և 1930 թվի ապրիլի 7-ին նորից կարգում ենք լրադրներում Փրանսիական Հասարակածային Աֆրիկայի նեղուերի յելույթի մասին Փրանսիական Համբակակիների դեմ։ Հաղորդվում ե հետեւյալը.

ՑԵԼՈՒՅԹ ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ԿՈՆԳՐԵՍՈՒՄ ԳԱՂՈՒԹԱՑԻՆ
ԻՇԱԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՄ.

Պարիզ: Ապրիլի սկզբներում տեղի ունեցան լուրջ հուզմունքներ Փրանսիական կոնգուի կենտրոնում, — Բրազավիլ քաղաքում։ Հուզմունքի անմիջական պատճառն ե յեղել զատարանի վճիռը մի ֆրանսիացու և մի քանի բնիկների գործի մասին։ Մեղադրյալները, վորոնք տեղական փոխադարձ ողնության ընկերության կազմակերպողներն են յեղել, դատապարտվել են յերեք տարվա



16 ԿԿ 5-58

Главлит № А-77.172.

Заказ № 2960

Тираж 5.000

Книжная ф-ка Центриздана Народов СССР. Москва,
Шлюзовая набережная, 10.

բանտարկության յուրաքանչյուրը։ Իմանալով դատավճռի մասին, մի քանի հազար բնիկներ շարժվում են գեղի դատարան դատապարտվածներին աղամելու նպատակով։ Վոստիկանությունը անդոր և գտնվում ցուցարարների դեմ և կանչում ե հրացանաձիգների ջոկատները, վորոնք կրակ են բացում բնիկների դեմ։ Բնիկները հուսահատ ընդդիմադրություն են ցույց տալիս, քարեր են նետում և ձեռնամարտ են սկսում վոստիկանների և հրացանաձիգների հետ։ Կան շատ վիրավորվածներ։ Նահանգապետը... վիրավորված և քարով։ Քաղաքի մի մասը, վորտեղ ապրում են բնիկները, դրավել են հրացանաձիգները։ Հուզմունքն ու ընդհարումները շարունակվում ելին յերեք որ։ Բեղդիական «Առար» լրադիրը դրում ե՝ «Հրացանաձիգները ստիպված ելին առանձնապես յեռանդով գործել ներքին կոնդո կոչված ավանում, վոր գտնվում ե հրազդավիլ քաղաքի մոտ։ Այդ ավանը հայտնի յե, վարպես բնիկների կոմունիստական տարրերի գործառնությունների բազա»*։

Այդ անընդհատ հաղորդությունները տեղական յելությունների մասին հիմք են տալիս մտածելու, վոր Ֆրանսիական Հասարակածային Աֆրիկայում վերջին տարիներս տեղի յե ունենում լարված աղաստդրական պայքար։ Հետագա բացատրությունից ընթերցողը կտեսնի, վոր վերջին տարիների հակամպերիալիստական շարժումը մեղ հետաքրքրող դաշտում այդ փաստերով չի վերջանում դեռ ևս։ Թեև յենդուրան ամեն կերպ աշխատում ե գաղութի սահմաններից գենը լուրեր բաց չթողնել գործերի իսկական գրության մասին, այնուամենայնիվ յեվրոպական մամուլի մեջ յերեվան են գալիս արժեքավոր տեղեկություններ այդ հարցի մասին։ Ներկա ակնարկի մեջ մենք կպատմենք, թե ի՞նչ պէս և այդ գաղութի դրությունը, ի՞նչպես են ապրում բնիկները Փրանսիական կապիտալիստական իշխանության տակ, ինչի՞ մեջն են և ի՞նչն են նեղրերի վերջին տարիների շարժման պատճառները։

* Պարագանել 1930 թ. 7 ապրիլի:

1. ՏԵՐԻՏՈՐԻԱՆ ՅԵՎ ԱԶԳԱԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ

Ֆրանսիական Հասարակածային Աֆրիկան հյուսիսից սահմանափակված և Սահարայի մեծ անապատով, արևմուտքից — Ֆրանսիական կամերուն գաղութով և Ատլանտիկ Ռվկիանոսի ափերով, հարավից — Բեղդիական Կոնդո գաղութով, արևելքից — Անգլիական Սուդան գաղութով։ Այդ ահազին յերկրի ընդհանուր հրազդարակը հալասար և 2.256.000 քառակուսի կիլոմետրի։ Հետևաբար, իր հրազդարակով այդ գաղութը 4,3 անգամ գերազանցում ե Ֆրանսիային։

Գաղութը բաղկացած ե հետեւյալ շրջաններից։

	Տարածությունը	Ազգանակչությունը
	քառ. կմ.	
Փարոն	274.870	465.000
Միջին Կոնդո	240.000	770.000
Ուրանգի-Շարի	493.000	1.100.000
Զադ	1.248.000	1.100.000
	2.255.870	3.435.000

Գաղութը բաղկացած ե հինգ բնական գոտիներից։

I. Ռվկիանոսի ափից սկսվում ե կուսական Մեծ Անտառի գոտին։ Դա մի ահազին անտառային տարածություն է։ Նրա լայնությունը մոտավորապես 750 կիլոմետր և ովկիանոսի ափից մինչև յերկրի լորքը։ Գաղութի սահմաններում կուսական անտառի հրազդարակը կազմում է 140.000 քառ. կիլոմետր, իսկ կենտրոնական Աֆրիկայի ամբողջ անտառային զանգվածը հավասար է 600.000 քառ. կիլոմետրի, այնպես վոր այդ անտառը շատ ավելի մեծ տարածություն է բանում, քան ամբողջ Գերմանիան։

Համարյա ամբողջ տարին անտառային գոտում անձրևներ են տեղում, և շուրջ տարին անտառը կանաչ է: Զրի առառությունը, միացած տաք կլիմայի հետ, հնարավորություն է տալիս շատ հարուստ բուսականության զարդանալուն: Ավելի քան հարյուր տեսակ արմավենիներ կան այստեղ, կոկոսի, ձիթապտղի, սաղոյի, կառուզուկի ծառեր և այլն: Ծառերը հասում են հսկայական բարձրության — 60-ից մինչև 80 մետրի: Անտառում ծառերի կատարների իրարինակով լինելուց առաջացած ամբողջական կամարի ծածկոցի տակ տիրում ե կիսախալար և ողը համակված ե փթող բույսերի և կենդանիների տաք գոլորշիներով: Բազմազան և հարուստ տեսակի ու ձեերի կենդանիները ապրում են այդտեղ, կերակրվելով Մեծ անտառի առատ մննդով: Հսկայական ոձերի և այլ յերկրակենցաղ կենդանիների ահազին քանակություն ապրում ե մամուապատ ու միշտ խոնավ հողի վրա և ծառերի արմատների մեջ: Անհամար միջատներ, յերեմն զարմանալի վառ գույներով, լեցնում են անտառի ողը: Ծառերի ճյուղերի վրա բնակվում են խայտաբղետ թռչուններ:

Անտառը բռնում է գաղութի ամբողջ հարավային մասը: Ովկիանոսի ափից քիչ հեռու (անտառային գոտում) բարձրանում է ափի ուղղությամբ այսպես կոչված՝ բյուրեղային սարերի բարձր շարքը: Այդ սարերի բարձրությունը հասնում է 3.000-ից մինչև 4.000 վոտնաչափի:

II. Կուսական Մեծ Անտառի գոտին ըրջապատում և պահարատների (саванна) գոտին: Այդ գոտում անձրևներ ավելի քիչ են լինում, քան Մեծ Անտառի գոտում: Ամառը և ձմեռը անձրևներ բոլորովին չեն լինում: Այդ պատճառով ել այստեղ գորդի նման խիտ բանում են միայն իտուերը մինչև 6 մետր բարձրությամբ: Անտառների հանդիպում ենք ավելի հաճախ գետերի մոտ: Այդ գոտում գտնվում է գաղութի կենարունական շերտը:

III. Պահարատների գոտին ըրջապատված և տափաստանների գոտիյով: Այստեղ բուսականության բնույթը պայմանավորված է տարվա չոր ժամանակի գերակշռությունով:

Խոտը շատ խիտ ծածկում է հողը, բայց կես մետրից ավելի չի բարձրանում: Միայն ջաղ լճի ռայոնը, վոր առատորեն ջրվում է լիճը թափվող գետերի սիստեմով, ավելի խիտ բնակչություն ունի:

IV. Ավելի ևս գեղի հյուսիս ընկած և անապատային տափաստանների գոտին: Հողի չափազանց չորությունը, վոր հետևանք է անձրևների հաղթագոյւտ լինելուն, հնարավորություն է տալիս բանելու միայն փշոտ մացաներին: Տափաստանների և անապատային տափաստանների հասարակածային գոտու մեջ մտնում է գաղութի հյուսիսային շերտը:

V. Վերջապես գաղութի ծայրագույն հյուսիսային շերտը գտնվում է արդեն Սահարայի տեսապատի գոտում: Բացառությամբ ուղղաների, անապատը բաղկացած է ապառաժուաբարձրություններից, մերկ հարթավայրերից, ավազաթմրերից, խճով ծածկված խոր հողիաներից: Աղքատ բուսականություն յերեւմ է միայն անձրևից հետո փոսերի մեջ և իսկույն այրվում:

Մեծ անտառի և պահարատների գոտիներով անցնում են բազմաթիվ գետեր. կոնգոն իր ներանգի և Սանդա գետառուներով, Ողովե և Նյանգա գետերը, վորոնք թափվում են Աստանատիկ ովկիանոսը: Գետերի մի ամբողջ սիստեմը թափվում է ջաղ լիճը, վորը գտնվում է գաղութի հյուսիսային մասում: Այդ գետերից ամենանշանավորը Շարի գետն է: Բայց դրանց մեծամասնությունը նավազնացության համար հարմար է միայն շատ փոքր տարածության վրա: Անձրևների շրջանում այդ գետերը հորդանում են, ծածկում են մեծ տարածություններ և անանցանելի յեն դարձնում յերկիրը:

2. ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԵՎԵՐԸ ՅԵՎ ՀԱՍԱՐԱԿԱՐԳԸ

Գաղութի աղդաբնակչության ճիշտ քանակը հայտնի չե: Յերկրի ընդարձակությունը և ծայրահեղ սակավաբնակությունը, այլ և հաղորդակցության անյերեւակայելի դժվարությունները չափաղանց դժվարացնում են կանոնավոր մարդահամարի կիրառումը:

Մի քանի հեղինակներ հաշվում են ազգաբնակչության
թիվը 10.000.000 մարդ: Բայց ըստ վերջին տեղեկությունների, վորոնք ավելի հավանական են, ազգաբնակչության
թիվը համասար է յերեք և կես միլիոնի:

Մեծ Անտառում նույնպես բնակչություն կա. այսուեղ,
գետերի ուղղությամբ, լճերի մոտ զրված են մարդկային
բնակատեղիներ: Այդ բնակչությունը, ինչպես և գաղութի
ամբողջ բնակչությունը, կարելի յէ բաժանել յերկու խմբի.

I. Նեղրեր, վորոնք զանազան ցեղերի յն բաժանված:
Հենց դրանց մասին ել մենք խոսելու յենք այս գրքույկում:

II. Նեղրիներ: Դրանք արտաքուստ տարբերվում են
նեղրերից իրենց կաշվի ավելի սաստիկ սկությամբ և փոքր
հասակով (սովորաբար նրանց հասակը 1 մետր և 55 սանտի-
մետրից բարձր չի լինում): Նրանք ապրում են անտառա-
յին պտուղներ հավաքելով և մանր վորսորդությամբ:
Փոքրիկ խմբակներով ապրում են ծառի ճյուղերից կամ
կեղևներից շինված խճճիթներում: Հաճախ նրանք բնա-
կարան են շինում իրենց համար բարձր ծառերի վրա, ժայ-
ռերի ճեղքվածքներում և այլն:

Դրանք ամենայետամասաց մարդիկն են յերկրիս յերեսին:
Ներկայում շատ քիչ նեղրիներ են մնացել: Նրանց փոք-
րիկ խմբակները պահպանվել են միայն Մեծ Անտառի
ամենաամատչելի տեղերում*:

Անտառում ապրողները նստակյաց են: Նեղրերը ապ-
րում են գյուղերում: Արտադրության ձեւ այսուեղ բրիչով
կատարվող հողագործությունն է: Միաժամանակ նեղրերը
պարապում են անտառային պտուղներ և մթերքներ հավա-
քելով, ինչպես, որինակ, արմավինիներ և հողային ըն-
կույցներ, կառուչուկ և այլն: Նեղրերը ցանում են մանիոկ
— տրոպիկական ալբում բույս, բանան, մի քանի յելա-
կինի բույսեր, — քաղցր գետնախնձոր և այլն:

Պահարարութեարի գոտում նույնպես նստակյաց և աղ-
գարնակչությունը: Նրա տնտեսության հիմքը յերկրագոր-

* Նեղրիներին անվանում են նաև «պիմեյներ», այսինքն թղուկներ
դիտնականները համարում են նրանց աֆրիկական մայր-ցամաքի ամե-
նահին ազգաբնակչության մնացողները

ծությունն է, միացած անասնապահության հետ, վորով-
հետեւ խոտի առատությունը հնարավորություն է տալիս
հաջողությամբ պարապելու անասնապահությամբ: Բարձր
խոտերը այրելով, բնիկները պարարտացնում են հողը: Այդ
շրջանում հաղորդակցության հետությունը հին ժամա-
նակներից նպաստել է ապրանքների փոխանակությանը:

Տափատանների գոտում նույնպես զարգացել է անաս-
նապահությունը պրիմիտիվ ձևով: Բայց ազգաբնակչությունն
այսուեղ յեղել է թափառական կամ կես-թափառական, կես-
հաստատաբնակ: Նույնն է յեղել դրությունը անապատային
տափաստանների և անապատի գոտիներում: Տեղուեղ, ջրի
մոտ, հիմնվել են ռազիսներ, վորտեղ հաստատաբնակ աղ-
գարնակությունը աճեցրել է արմավի ծառեր և մի քանի հաս-
կագոր բույսեր:

Ֆրանսիական տիրապետության մոմենտին, վոր տեղի
ունեցավ անցյալ դարի ութունական թվականների վերջե-
րում, Մեծ Անտառի և հյուսիսային գոտիների աղջարնակչու-
թյունը գտնվում էր զրւու բնական տնտեսության շրջանում,
այսինքն՝ իր բոլոր պահանջները նա բավարարում էր իր խոկ
տնտեսության բերքերով: Վոչինչ, կամ համարյա վոչինչ
չեյին ծախում ու չեյին գնում: Մեր ձեռքի տակ ունեցած
նյութերից կարելի յէ յեղբակացնել, վոր այս վերջին տարի-
ներս Փրանսիական վարչությունը ձգտում է ստիպելու Ֆրան-
սիական Հասարակածային Աֆրիկայի ցեղերին, վոր նրանք
սկսեն չուկա հանել իրենց ապրանքները և, առաջին հերթին,
պատրաստեն հումուրիթ Փրանսիական արդյունաբերության
համար: Այդ նպատակով Մեծ Անտառի գոտում, վորտեղ հա-
ջողությամբ բնում է կառուչուկի վոչ միայն վայրի, այլ և
կուլտուրական ծառ, * գաղութային վարչությունը (ըստ յե-
րեսությին 1927 — 1928 թվականներից) սկսում է բաժանել
տեղական հողագործներին այդ ծառի տունկեր: Այդ կառու-
չուկը, վոր համաշխարհային շուկայում սպառվում է իսո-
չոր չափերով, բնիկները պարտավոր են հանձնել վարչու-

* Կուլտուրական ծառի կառուչուկը անչափ ավելի արժեքավոր է, քան
վայրի ծառի կառուչուկը.

թյանը պետական գներով, վորեց հետո ուղարկվում է արտասահման։ Այնուհետև, Զարդի ռայոնում, վոր լով վոռոգվում է, Քրանտիական հրահանգիչները նորերս սկսել են սովորեցնել ազգաբնակչությանը բամբակ ցանելլ։ Այսպիսով սեամորթները մի քանի տեղերում սկսել են աշխատել համաշխարհային շուկայի համար (և վոչ թե միայն անտառային պտուղներ հավաքել)։ Բայց իր ամբողջությամբ գաղութի նեզոր ազգաբնակչությունը դեռ ևս գտնվում է բնական տնտեսության շրջանում։ Միայն այն վայրերում, վորոնք մոտ են գտնվում սակավաթիվ յելքոպական բնակատեղիներին և հաղորդակցության ճանապարհներին, նեղերը արդեն անցնում են ապրանքային տնտեսության ուղին։

Յերկրի ցեղերի տնտեսական զարգացման շրջանների վորոշումը հիմք է ծառայում հասկանալու այն հարաբերությունները, վորոնք գոյություն ունեն Քրանտիական հափշտակիչների և տեղական ազգաբնակչության միջև։ Այդ հարաբերությունների մասին մենք կխոսենք հետեւյալ գլխում։

Ավելացնենք և այն, վոր յերկրի շատ տեղերում ցեղական և տոհմային պետերը պահպանել են իրենց իշխանությունը ազգաբնակչության վրա, վորին նրանք շահագործում ելին Քրանտիացիների դալուց առաջ ել։ Այդ փոքրիկ թագավորների իշխանությունը շատ հաղիվ է տարածվում խոշոր յերկրամասերի վրա։ Նրանք գտնվում են տեղական Քրանտիական վարչապետների աշալուրջ հսկողության ներքո։ Այս վերջիններս ակտիվ կերպով ոգտագործում են պետերին տեղական մասսաները ճնշելու գործում։

3. ԱՇԽԱՏԱՔԻ ՊՐՈՒԼԵՄԸ ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՀԱՍՏԱԿԱՄԱՅԻՆ ԱՖՐԻԿԱՅՈՒՄ

ա) ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ԶԵՆՔԵՐԻ ՊԱԿԱՍՈՒԹՅՈՒՆԸ ԳԱՂՈՒԹՈՒՄ ՅԵՎ ԴՐԱ ՊԱՏճԱՌԵԼ։

Ֆրանտիական գաղութների ընդհանուր տարածությունը կազմում է 13 միլիոն քառակուսի կիլոմետր, իսկ ազգաբնակչությունը՝ 59 միլիոն մարդ։ Դուրս է գալիս՝ 5 հոգի մի քառակուսի կիլոմետրի վրա։ Ամական գաղութային Ֆրան-

տիայի ազգաբնակչությունը խիստ անհամաշափ է դասավորված զանազան տեղերում։ Հնդկա-Չինաստանում մի քառակուսի կիլոմետրին ընկնում է 27 մարդ, Հյուսիսային Աֆրիկայում՝ 10, Մադագասկարում՝ 6, Ֆրանսիական Արևմտյան Աֆրիկայում և Նոր Կալիդոնիայում՝ 2,6, Ֆրանսիական Հասարակածային Աֆրիկայում՝ 1,2 և Ֆրանսիական Գվինեյյում՝ 0,5։

Այսպիսով մենք տեսնում ենք, վոր Ֆրանսիական Հասարակածային Աֆրիկան բնակության ինդղի վերաբերմամբ չափազանց անբարեհաջող պայմանների մեջ ե գտնվում։

Միանդամայն պարզ է սրանից, վոր կենդանի բանվարական ուժի պահեստը, վոր կա յերկրում, չափազանց աննշան է։ Վերը մենք ասացինք, վոր Ֆրանսիական Հասարակածային Աֆրիկայի բնիկները դեռևս վարում են առավելապես բնական տնտեսություն։ Ուստի բոլորովին հասկանալի յե, վոր քանի տեղական տնտեսությունը բավարարում է եր պահանջները սեփական աղբյուրներից, — դժվար է ստիպել սեամորթ հողադործին կամ անանապահին հեռանալու իր տնտեսությունից և աշխատելու յելքոպական ձեռնարկությունների մեջ նույն իսկ վարձով։

Ճիշտ է, հարկեր վճարելու անհրաժեշտությունը, փողի միջոցվ ազատվելը այնպիսի ծանր պարտականություններից, վորպիսին նոր ճանապարհներ կառուցելն ե, յեղածների նորոգությունը, ապրանքների փոխադրությունը, այլ և այն հանգամանքը, վոր փողը հնարավորություն ե տարիս ձեռք բերելու սպիրտ, ծխախոտ և «քաղաքակրթության» այլ հրաշալիքներ, վորոնց Փրանտիական վաճառականները ծանոթացրել են սեամորթներին, — արգեն տեղայինների խոչըր մասի մեջ ստեղծել են վորոշ շահագրդություն փողի վերաբերմամբ։ Անկախ նրանից, վոր իրենց հիմնական պահանջները նեղերը բավարարում են սեփական տնտեսության միջոցներով, յելքոպական անտառային ձեռնարկությունների կոնցեսիոն ընկերությունների* ուայոններում ապրող

* Կոնցեսիոն — դա այն յերկությն է, յերբ պետական իշխանությունը վարող պայմաններով բացառիկ իրավունք ե տարիս առևտուարդունաբերական գործներության, շահագրծելու առանձին ուայոնները, տնտեսության ճյուղերը և այլն։

նեղը կը համաձայնվելին աշխատել յեփրոպացիների համար գյուղատնտեսական աշխատանքների բացակայության ըրջաններում : Բայց բանը նրանումն է, վոր բնիկները շատ հաճախ, ինչպես վարը մենք մանրամասնորեն ցույց կտանք, իրենց աշխատանքի համար ստանում են չափազանց չնչին վարձատրություն և կամ բոլորովին վոչինչ չեն ստանում : Հաշվետվության ժամանակ սեամորթներին կողոպտելը այսպիսի մի սովորական յերևույթ է, վոր նեղը առհասարակ սպիտակամորթների համար աշխատելը համարում և ձրի աշխատանք : Այսպիսով տեղայինների ցանկությունը՝ չաշխատել ֆրանսիական ձեռնարկություններում, հիմնված և նեղը բի տնտեսության բնական կառուցվածքի վրա : Այդ ցանկությունը սաստկանում և գաղանաբար շահագործումով և աշխատանքների՝ սև ցեղերի կյանքի և առողջության համար կորստաբեր բնույթով :

Այդ փաստերի հետ միասին կան մի չարք պատճառներ, վորոնք սահմանափակում են վորոշ բանվորական կաղը երը ողտագործելու հնարավորությունը և դրանով՝ ավելացնում են յեփրոպական ձեռնարկությունների համար պահանջվող բանվորական ուժի կարիքը : Այստեղ ամենից առաջ պետք է ընդդրկել այլ բանվորական ուժի չափազանց ցած վորակը : Անուանից կամ նույնիսկ հյուսիսային գոտիներից վերցրած նեղը բը չեն կարողանում ողտվել արտադրության յեփրոպական ծագումն ունեցող ամենահասարակ գործիքներից : Որինակ, ճանապարհների շինության համար յեկած նեղը բատաշել ելին բահեր հող փորելու համար : Յել ահա, անտառի զավակները մի կողմ են չպրտում բահերը և սկսում են փորփորել հողը սեփական մատներով : Բահերից ողտվել նրանք չեն կարողանում, իսկ նրանց սովորեցնելը վարչությունից վորոշ ջանք և պահանջում : Վորովհետեւ պարոնայք վարչակաները շատ ել չելին աշխատում սովորեցնել սեամորթներին աշխատանքի կատարելագործված ձեռքը, դրա համար ել բնիկները գերադասում ելին հողը փորել բնությունից իրենց նվիրված գործիքներով, այսինքն ձեռքերով : Պետք և հաշվի առնել և այն, վոր նախամարդկային տնտե-

սության պայմաններում բնիկներից չե պահանջվում տեղական ջանք աշխատանքի մեջ : Բայց իմպերիալիստական շահագործության չնորհիվ գաղութի աղդաբնակչությունն այնքան հյուծված և Փիլիքապես խրոնիքական սովածությունից և բազմաթիվ հիմնդություններից, վոր տեղացու որդանիղմը յերկար լարված դրության չի գիմանում : Նեղը աշխատանքի մեջ առանձին ջանք գործ դնելու հիմք ել չունի . իր աշխատանքի համար ամենալավ դեպքում նա ստանում է դրոշներ, իսկ հաճախ՝ վոչինչ չի ստանում : Այստեղից և ծագում հասարակածային Աֆրիկայի աշխատավորի թույլ արտադրագականությունը : Իսկ առհասարակ, նա ստիպված է կատարել չափազանց ծանր աշխատանք, և' անտառային մշակումները, և' Բրազավիլ — Ովկիանոս յերկաթուղային գծի (այդ ժամանակնենք դեռ կիսունենք) շինությունը պահանջում են ուժերի ծայրահեղ լարումն, վորովհետեւ այդ բոլոր աշխատանքները կատարվում են խոչոր չափով մկանների ուժով և աննկարագրելի տոթի մեջ : Այդ պայմանները առաջ են բերում առանց այդ ել Փիլիքապես թույլ սեամորթների ուժերի արագ նվազումն : Դրա համար ել նրանք շուտով շարքից դուրս են գալիս :

Վարչության՝ մարդկանց մեծ քանակության կարիք ունենալու մյուս պատճառը կայանում ե նրանում, վոր համարյա անկարելի յե ողտագործել անասունների բանվորական ուժը Մեծ Անտառում : Անասունները շուտով սատկում են այդ գոտում ցեցի կոչված մի տեսակ ճանձերի խայթոցից, վոր տարածում և քնեածություն մարդկանց մեջ, իսկ անասուններին վոչնչացնում ե սաստիկ արագությամբ : Նեղը բի աշխատանքի նորմալ արտադրողականությանը խտնդարում և ճանապարհների համարյա կատարյալ բացակայությունը դաղութում ընդհանրապես և մասնավորապես՝ Մեծ Անտառում : Դա անհնարին և դարձնում ողտագործել ավտոմոբիլը բեռնակրության համար ; Տրոպիքական գետերը նավագնացության և անտառայություն փոխադրելու համար ողտագործելու չափազանց դժվարությունն ես հանդիսանում և աեղական բանվորների աշխատանքը նվազեցնող մի գործոն :

Բայց ամենից շատ յեվրոպական ձեռնարկողներին ստիպում և փնտրել մեծ քանակությամբ բանվարական ուժ այն խայողությունը, վոր նրանք անում են նույնիսկ հասարակ մեջենաներ ձեռք բերելու ինչըրում: Բնորոշ է, վոր ֆրանսիական կառավարության արդեն կայսցրած վորոշումները՝ դաղութի ձեռնարկությունների մեջ նորագույն դործիքներ և աշխատանքի մեխանիզմացիա մացնելու մասին չեն կիրառում վոչ միայն մասնալոր ընկերությունները, այլ նույնիսկ վարչությունը (խճուղիներ շինելու և այլ աշխատությունների մեջ): Միայն այս վերջին տարիներս, յերբ մահար սկսել եր սպառնալ յերկրի նեղորական բնակչությունը իսպառնաջնջ անել, — ընկերությունները և դաղութային իշխանությունները սկսեցին մացնել աշխատանքի մեջ ամենահասարակ մեխանիզմներ, որինակ բարձրացնող կրաններ, բեռնատար ավտոմոբիլներ և այլն:

բ) ԻՆՉՊԵՍ Ե «ԼՈՒԾՎՈՒՄ» ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊՐՈԲԼԵՄԸ
ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՀԱՍՏՐԱԿԱԾԱՅԻՆ ԱՅՐԵՒԱՅՑՈՒՄ

Վերև հիշված պատճառները առաջ են բերում յեվրոպական ձեռնարկությունների համար շատ մեծ քանակությամբ բանվոր ձեռքերի պահանջ: Այդ պահանջի բարվարարությունը ձեռք և բերվում բնիկների համար պարտադիր աշխատանքի ուժիմ սահմանելով:

Հակառակ կենորոնական իշխանության դեկրետներին և որենքներին, վորոնցով վարչությանը արդելվում ե հարկադրել տեղայիններին աշխատելու մասնավոր ձեռնարկություններում, — տեղական չինովնիկները սովորաբար հրաժայում են գյուղական տանուտերերին կամ ցեղերի պետերին՝ ուղարկել այսքան մարդ համապատասխան ընկերությունների գրասենյակը: Մերժումը պատճառ է դառնում կալանավորման կամ խայտառակ ծաղրաբանության, ինչպես մենք փաստերով կապացուցենք վարը:

Բայց կան վարչական ճնշման ավելի «խաղաղ» միջոցներ. բնիկների վրա բարձում են զրամական ծանր տուրքեր: Այն ժամանակ սեամորթը փող ձեռք բերելու համար ստիպված

ե լինում գնալ յեվրոպացու մոտ աշխատելու: Ծերբեմն ել այդ նսղատակով վարչապետները ստիպում են տեղացուն այնպիս փոխել իր անտեսության ձևը, վոր նա փողի կարիք ունենա: Այդ իսկ նսղատակով Փրանսիական վարչապետները հարկադրում են անտարի նախնական զավակներին ձեռք բերել ընտանեկան կարիքների համար յեվրոպական առարկաներ — ափսեներ, մանր կարասիք, հագնել և հազցնել իրենց յերեխաներին յեվրոպական չորեր: Շատ լայն չափերով կիրառվում ե նեղորերի մեջ սպիրտ, արագ, գինի խմելու և ծինելու (մի քանի գաղութներում — ոպիում) սովորությունների տարածելը: Սովորելով այդ թույների գործածությանը, նեղորերը ստիպված են լինում վարձվել յեվրոպացու ձեռնարկության մեջ, վորակեսղի փող ձեռք բերեն արագ կամ ծիսախոտ ձեռք բերելու համար:

Իսկ պետական աշխատանքների համար տեղացիներին աշխատեցնելը որենքով կարող ե գործադրվել պարտադիր կերպով: Պետական աշխատանքներին և մասնավոր ձեռնարկությունները ուղարկվելիք բանվորների քանակությունը սահմանվում ե ամեն տարվա համար և ապա վարչությունը բաժանում ե այդ քանակությունը ըստ գաղութի ըրջանների: Մասնավոր ձեռնարկությունները հայտարարություն են տալիս վարչությանը իրենց հարկավոր բանվարական ուժի քանակի մասին:

Ուրեմն, յեթե պետական շինարարության մեջ աշխատել նեղորերին ստիպում են որենքով, ապա մասնավոր կապիտալիստների համար նրանց հարկադրում են աշխատելու տընտեսական և վարչական միջոցառումներով: Պետք ե ասենք, վոր այստեղ խոսքը առայժմ վերաբերում ե այն բանվորներին, վորոնք կոչվում են աշխատելու՝ յերկրի մի քանի ամսվա ճանապարհի վրա դանվող մասերում:

Իրենց բնակության վայրերից գուրս աշխատելու կոչված նեղորերի ընդհանուր թիվը տատանվում է 35.000-ից 40.000: Դա կազմում է ազգաբնակչության թվի 2%-ից վոչ ավելին: Բայց այստեղ հաշվի պետք է առնել այն, վոր, ըստ հեղինակավոր Փրանսիացի գրողի վկայության, «60 տարե-

կանից բարձր ծերունին նեգրական յերկրներում նույնպես հազվագյուտ է, վորպես մեղանում (Յելրոպայում) 100 տարեկանը»: Այնպես վոր ծերությունը և հաշմանդամությունը բնիկների մեջ վրա յե հասնում չատ վաղ: Հետեւաբար ծանր Փիղիքական աշխատանքին ընդունակ (իսկ միմիայն այդպիսի աշխատանքների յեն կանչում նրանց) մարդկանց թիվը ֆրանսիական հասարակածային Աֆրիկայում առհասարակ պետք ել լինի չատ ավելի քիչ, քան յեվրոպական յերկրներում: Հետո, պետք չե մոռանալ, վոր ամեն տեսակ հիվանդություններ այստեղ չափազանց տարածված են: Բժշկական քննությունը սովորաբար վանում ե թույլ և հիվանդուտ տարրերը, այնպես վոր բնակության վայրից դուրս աշխատանքի յե ուղարկվում աղջաբնակության ամենաառողջ մասը:

Սակայն իրենց բնակության ռայոններից դուրս աշխատանքի տարրեկությունը ստեղծագիների աշխատանքի հարկադրությունը յեվրոպացիների մոտ աշխատելում: Բանը նրանումն ե, վոր ինենց իրենց բնակության ռայոնում ազգաքնակչությունը ստիպվում ե վարչության կողմից հավաքել կառուչուկ, ընկույզներ յեկ այլ մքերքներ ֆրանսիական կրնցեսփոն լնիկերությունների համար: Բացի դրանից, բնիկները պարտավոր են, վորպես բնական տուրք, կանոնավորապես կատարել ծանրությունների փոխադրությունը: Որենքով պարտադիր աշխատանքի որերը տարեկան 12 որից ավելի չպետք ելինեն: Բայց թե ինչպես են կիրառվում բուրժուայական որենքները գործնականում, կարելի յե դատել այն որինակներից, վոր մենք կրերենք վարը:

Թվական տվյալներ այն նեգրերի քանակության մասին, վորոնք ստիպողաբար աշխատում են իրենց բնակության ռայոններում (հայաքել անտառային մթերքներ կոնցեսիոն ընկերությունների համար) չկան: Ըստ յերեսույթին այդ քանակությունը գործնականում սահմանափակվում ե միմիայն վարչության կամայականությամբ: Ընդհանուր առմաբ կասկած չկա, վոր պարտադիր աշխատանքների բոլոր տեսակների համար աշխատանքի յե կոչվում գործելու ընդու-

նակ յերկսեւ աղդաբնակության չափազանց զգալի մասը: Այժմ ծանոթանանք աշխատանքի պայմանների հետ: Որենքով Յ ամսից ավելի կատարվող աշխատանքը պիտի ձևակերպվի գրավոր պայմանով:

Դրանով որենքը ձգտում ե, վորպես թե, «պաշտպանելու» բնիկներին շահագործելուց պայմանը, վորպես թե, ապահովում ե յերկու պայմանավորվող կողմերի իրավունքներն ու պարտականությունները:

Բայց այդ պայմանագիրը մշակել ե վարչությունը. դա տիպային պայմանագիր ե: Բոլոր պայմանները, վորոնց թվում նաև մինիմալ աշխատավարձի և սննդի չափը, նույնպես սահմանում ե վարչությունը: Զեռնարկողը փաստորեն պարտադիր աշխատանքի պայմաններում հազիվ թե ցանկություն ունենա վճարելու ավելին մինիմալ աշխատավարձից, վոր սահմանում ե վարչությունը և՝ բարելավելու աշխատանքի պայմանները: Այնպես վոր պարտադիր պայման կընքելը վոչ միայն վոչ մի բարելավություն չի մտցնում տեղացի բանվորների դրության մեջ, այլ և խանդարում ե այդ բարելավմանը, վորովհետեւ կարգավորելով վարձի պայմանները, տիպային պայմանագիրը միացնում ե ձեռնարկողներին աշխատավորների դեմ, զրկում ե վերջններիս բանվորական ուժի պակասությունը ֆրանսիական հասարակածային Աֆրիկայում պարտադիր աշխատավորությունը՝ համարական համար ամսական, իսկ Զաղում՝ 30 ֆր. *: Զի կարելի չընդգծել, վոր պայմանագիրը գրվում ե ֆրանսերեն, վոր բնիկները, իհարկե, չեն հասկանում: Առհասարակ պայմանագիր կնքելու այդ ամբողջ գործողությունը «արդարության» մի անմիտ կոմեղիա յե: Կարեւոր այն ե, վոր կյանքին ու առողջությանը մեծ վտանդ սպառնացող մի ամսվա ծանր աշխատանքի համար նեգրերը ստանում են 2 ք. 10 կ.-ից մինչև 4 ք. 20 կ.: Հասկանալի յե,

* Ֆրանսեր պատերազմից առաջ հավասար եր 37,5 կոտելի, իսկ այժմ՝ 7,5 կոտելի: Մի ֆրանսեր հավասար ե 100 առնամի:



Հասարակածային Աֆրիկայի յերկրների աշխատավարձը չի կարելի համեմատել յելքողական կապիտալիտական յերկրների աշխատավարձի հետ ըստ նրանց թվական մեծության, բայց այնուամենայնիվ այդ տվյալները այնչափ արտահայտիչ են, վոր նրանց չնորհիվ կարելի յէ գաղափար կազմել նեղրական աշխատանքի եժանության մասին։

Բացի փողից, սևամորթ բանվորները պարտադիր կարգով սուանում են նաև սնունդ։ Այդ աննդի որեկան չափը ասհմաններ ե Գաբոնի վարչությունը (այդ սրջանի համար) հետևյալ ձևով*։

1) Մանկոկ *	1.500	դրամ
2) Բանան, մախո	2.000	*
3) Թարմ ձուկ կամ միս	300	*
4) Բաւական յուղ	50	*
5) Աղ	20	*

Այդ աննդի մեջ չկա չաքար։ Այնուամենայնիվ աննդի չափը կարելի յէ լիովին բավարար համարել։ Սակայն հաշվի առնելով որինականության ընդհանուր մակարդակը յերկրում, խիստ կածկածելի յէ, վոր նեղրերը իսկապես սուանան այն ամենը, ինչ վոր թված ե այստեղ։

Վարձի ժամկետի մաքսիմալ աեռղությունը սահմանված ե որենքով 2 տարի։

Պայմանագրի խախտումը և նրանից ծաղող ընդհարումները մրանսիական Հասարակածային Աֆրիկայում յենթակա յին առանձին արքիտրածական (միջնորդ դատարանային) խորհրդի իրավասությանը։ Այդ խորհրդը բաղկացած է մի չինովիկ-հախաղահից և յերկու անդամներից, վորոնցից մեկը յելքողացի և մյուսը բնիկ։ Խորհրդը իրավունք ունի դատապարտելու միջնել մի ամսվա բանտարկության տեղացիներին՝ աշխատանքը ինքնագույս դադարեցնելու համար։ Այդպիսով աշխատանքը պայմանագիրը խախտելը մրանսիական Հասարակածային Աֆրիկայում (ինչպես և բոլոր Փրանսիական դադութներում) քննվում ե, վորպես քրեյալյան հանցանք։

Այժմ անցնենք տեղական ազգաբնակչության բանվորական ուժը ողտագործելու ձևերին ծանոթանալում։ Կազինությունը մացվում ե Ֆրանսիական Հասարակածային Աֆրիկան կապիտալիտական կոնցեսիոն (այսինքն՝ վորոնք ունեն վորոշ ու այլները շահագործելու մոնոպոլիան*)։ և վոչ-կոնցեսիոն ընկերությունների միջոցով, վորոնք ստեղծվում են գաղութի բնական հարստությունները շահագործելու և մասնավորապես առաջին յերկաթուղարյին գիծը — Բրազիլի — Ռիվերանոս — Հինելու համար։ Քննենք սուանձինապահին Փրանսիական կապիտալի գործներության յերկու ձևները։

4. ԿԱՊԻՏԱԼԻՍԱԿԱՆ ԱՐՇԱՎԸ ՓՐԱՆՍԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԾԱՅԻՆ ԱՖՐԻԿԱՅՈՒՄ

ա) ԿՈՆՑԵՍԻՈՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ֆրանսիական Հասարակածային Աֆրիկայի նվաճումը վերջացել ե անցյալ դարի 90-ական թվականների սկզբում։ Այդ ժամանակը զուգադիպում ե ավտոմոբիլիզմի ուժեղ զարգացման հետ համաշխարհային շուկայում։ Դրա հետ միասին սկսվում է կառուչուկի* ուժեղ պահանջի արջանը։ Այդ պահանջը մեկը յեղավ հիմնական պատճառներից, վորդրեց յելքողական կապիտալիտական մտցնել կապիտալը Աֆրիկայի տրոպիկական (արեալաբանային) այն յերկրները, վորտեղ գտնվում եր կառուչուկի աղբյուրը։

Մի ուրիշ պատճառ, վորը մզեց յելքողական կապիտալիզմը այդ յերկրները, ուստի եժան անտառանյութ փնտրելու հարցն ե։ Յելքողական անտառային հարստությունները անցյալ դարի վերջերում սաստիկ նվազել ելին։

Ահա թե ինչու XIX դարի վերջին տասնամյակը զուգադիպեց մասնավորապես նաև Ֆրանսիայում կապիտալիտա-

* Մոնոպոլիա (մենաշնորհ) նշանակում ե բացառիկ իրավունք վորոշ գործներության ե, մասնավորապես, առևտուարդյունաբներական պարփակում։

** Եւլակենի մի բույս ե, մեր ճականդեղի նման։

*** Կառուչուկը այն նյութն ե, վորից սետին են պատրաստում։

կան ընկերությունների հախուռն զարգացմանը՝ կառուչուկ հավաքելու և գաղութների տրոպիկական անտառները մշակելու համար։ 1898—1899 թվականներում ստեղծվեցին վոչ ավելի և վոչ պակաս — քառասում կոնցեսիոն ընկերություններ ֆրանսիական Հասարակածային Աֆրիկայի հարատությունները մշակելու համար՝ 50.000.000 ֆրանկ ընդհանուր դրամագլուխով։ Համարյա ամբողջ ահաղին յերկիրը բաժանված եր խոշորագույն կապիտալիստական կոնցերների՝ մեջ։ Այն մի ընկերություն շահագործության համար ստանում եր 500.000-ից մինչև 15.000.000 հեկտար հող 30 տարի ժամանակով։ Ընկերությունները ստանում եյին մոնոպոլիա՝ կոնցեսիոն հողամասերում ապրանքներ ներմուծելու և արտահանելու։ Յեվ, վոր ամենակարեւորն ե, նրանք ձեռք բերի սեփականության իրավունք այն ամեն քնական հանգերի վերաբերմամբ, վորոնք դտնվում են կամ կարող են ստացվել համապատասխան կոնցեսիայի հողամասի վրա (փղոսկր, կառուչուկ, արմավենու ընկույզ և այլն)։ Մինչև այդ բերքեր հավաքելու և վորսորդության իրավունքի սեփականությունը պատկանում եր բնիկներին։ Իսկ այժմ կոնցեսիոնները փաստորեն ձեռք եյին բերել հնարավորություն՝ ստիպելու տեղացիներին հավաքելու իրենց համար իրենք սահմանում եյին ըստ իրենց հայեցողության։ Հստ վորում այդ վարձատրությունը տրվում եր վոչ թե բերքերի համար, այլ նրանց հավաքելու աշխատանքի համար։ Կոնցեսիոնական արտօնության համար ընկերությունները պարտավոր են վճարելու գանձարանին տարեկան 15% իրենց մաքուր շահից։

Տիրանալով ներմուծության մենաշնորհի իրավունքին, ընկերությունները իրենց հողամասերում նշանակում են ցանկացած գներ ներմուծվող ապրանքների համար։ Իսկ մթերման և տեղական բերքերի մոնոպոլիան նրանց հնարավորություն և տալիս սահմանելու կառուչուկի, անտառանյութերի, փղոսկրի և այլն գները։ Պարզ ե, վոր այդ գները

** Կոնցերնը խորա կապիտալիստական միավորությունն ե,

չառ քիչ են համապատասխանում չուկայի գներին։ Ոչահնչի թվեր ե բերում մի ֆրանսիացի ճանապարհորդ «Սամագրաւանդի» կոնցեսիոն ընկերության գործակալները 1927 թվին մի կիլո կառուչուկը առնում եյին յերկու ֆրանկով, մինչդեռ կոնցեսիայի սահմանից գուրս դանվող ազատ չուկայում այդ նույն քանակության կառուչուկը ծախվում եր տասից մինչև տասնեւինգ ֆրանկով։

Ըստ յերկույթին ընկերությունները չեն ամաչում տալու բնիկներին փոքրիկ փոխառություններ կամ ավանսներ լավ տոկոսներով բերքերի հավաքման հաշվին։ Վորովհետեւ յերկրում մինչև վերջին տարիները սովոր սովորական հյուր եր, դրա համար ել լայն ծավալ և ստացել մթերքներով և մանավանդ կենսամթերքներով ստրկացնող ավանսներ տալը։ Ծխախոտը և ալկոհոլը նույնպես տարածում են բարձրակիրթ ձեռնարկողները, իհարկե, մոնոպոլիստական գներով։

Կոնցեսիոն ընկերությունները ստիպում են բնիկներին չնչին վարձատրությամբ վոչ միայն հավաքել կառուչուկը և փղոսկրը, այլ և մշակել անտառանյութերը։ Այդ դեպքում աշխատանքի կոչված տեղացիները կտրում են հսկայական ծառերը, վորոնք հաճախ մի քանի տասնյակ մետր բարձրություն և մի քանի մետր լայնություն ունեն, և ապա քարշ են տալիս, դուրս բերում կուսական խիտ անտառից այդ ծառերի ահագին բռները։ Այդ գերանների ծանրության մասին կարելի յե գաղափար կազմել նրանից, վոր հաճախ հարյուր նեգր չեն կարողանում տեղից շարժել վայր ընկած ծառը, ինչպես մենք կտեսնենք այդ վարը։ Բարչ են տալիս ծառերը տասնյակ կիլոմետր դեպի դետերի ափը։ Այստեղ նրանց կապկառամ են իրարու լաստաձեռ ու ճանապարհում ովկիանոս, վորտեղից նրանք արտահանվում են Յեվրոպա։ Բայց, ինչպես ասացինք վերը, տրոպիկական գետերը սովորաբար պետքական են ապրանքատարության համար միայն իրենց հոսանքի մի փոքրիկ մասով։ Վորտեղ գետի ջուրը նվազում է կամ կան ջրի տակ ժայռեր, նեղերը ստիպված են լինում քակել լաստերը, ափ դուրս բերել գերանները և նորից քարչ տալ անտառի միջով։ Տրոպիկական

ծառերի մի քանի տեսակները այնքան պինդ են ու ծանր, վոր ջրի յերեսին չեն մնում: Նավերի ոգտագործումը անտառանյութերի փոխադրության համար սպահանջում եւ բավականացափ ծախսեր և բացի այդ, գետերն ել նավազնացության համար շատ հարմարություն չունեն: Ապրանքատար ավտոմոբիլներն ել եժան չեն և չի յել կարելի նրանց անտառը թողնել, վորովհետև հարկավոր են ախտապես մաքրել անտառը և ճանապարհներ չկնել: Դա, իհարկե, ծախսեր և պահանջում: Ավելի հեշտ ե ու ճենառու ստիպել աշխատելու «բանանի մեքենաները». նրանք անչափ եժան են ելեկտրական կամ բենզինով գործող մեքենաներից («բանանի մեքենա»—տեղացիների ծալլրական անունն ե, վոր տվել են նրանց գաղութային հափշտակիչները):

Ահա ինչպես են կարագրում մի Փրանսիացի զրող, վորը 1928 թվին այցելել եր գաղութի անտառային մշակումները, իր տեսած պատկերը: Հեղինակը անցել է խիտ անտառով, դժվարությամբ պատռելով իրարու փաթաթված ճյուղերի կանաչ պատը: Սկզբում անտառում տիրում եր լոռություն: «Հանկարծ անտառը խոսեց: Կարծես յես լսում եյի հեռավոր ձայների խեղդվող քրթմնջում: Անցնում եմ առաջ: Թվում ե, վոր մի մեծ ամբոխ հեռվում աղոթում ե... Բայց անտառը գեռ ևս խլացնում է ձայները: Ապա ձայները ավելի պարզ են դառնում:

— Ախ-յա՛, ախ-յա՛, ախ-յա՛, ախ-յա՛, յա՛, յա՛:
— Յա՛-ա-ա-ա'-ա-, յա՛-ա'-ա'-ա'-ա'

Մոտենում եմ ձայների տեղին: Տեսնում եմ հետևյալ պատկերը:

Հարյուր տկլոր նեզքեր, կապկալած հոկայական գերանին, ուժ են քափում շարժելու նրան տեղից:

— Աա'-ա'-ա'-ա'-ա-, յա՛-ա'-ա'-ա'-ա-, — գոչում են նեղերը, լարելով բոլոր ուժերը:

Վերահսկիչը տակտի չափով խփում է մտրակով: Մտրակի ամեն մի հարվածից նեղքերը ջղածդարար առաջ են նեւում: Վերահսկիչը դես ու դեն ե ընկնում ցնցողական շարժումներով: Նա բղավում ե, վոռնում ե գաղանի նման...



Ալգրերի գիրքի սարքելիս

Իրենց ահաղին ջանքի մեջ ձիմարդիկ, ասես բաղկացած լինեն միմիայն լարված մկաններից: Նրանք քարշ են տալիս, դլուխները առաջ ձգած: Ճյուղերը ծեծում են նրանց յերեսները: Վերավորված վոտներից հօսող արյունը ցույց է տալիս նրանց անցած ճանապարհը:

Դա մի կատարյալ խելադարության պատկեր է: Ստացվում է այնպիսի տպավորություն, վոր կարծես կատաղի արշավ են կատարում վորսորդական չները, դուգուում են վորսկանները, բղավում են ծառաները, շառաչում են մտրակները, հաջում են չները»:

Զարմանալի չե, վոր նեղրերը փախչում են այդ սոսկալի տաժանակիր աշխատանքից: Բայց տուն վերադառնալ նրանք վախենում են: Յել ահա, ձեռքի տակ յեղած տվյալներից չերեսում ե, վոր մոտ տաս հաղար փախստական նեղրեր ապրում են անտառում և վարում են վայրի գաղանի կյանք:

Այնինչ մի քանի ընկերություններ, մանավանդ անտառապահ պատրաստող ընկերությունները, վաստակում են ահագին կարողություններ: Ահա ձեզ որինակ: «Վերին կոնգո» ընկերության գլխավոր փայտերերն են մի ինչ վոր յեղբայրներ Տրիո: Յերեսուն տարի սրանից առաջ նրանք տվյոր եյին մուրացնանի նման: Նրանք գյուղից յեկել են Պարիզ փայտե կոչիկներով և այն ել՝ վոտով: Բայց ահա նրանք ընկան գաղութային մախինացիաների յետելից: Գործի գցեցին «բանանի մեքենանելը» մտրակի և հրացանի ողնությամբ: Մեքենան սկսեց պառույտ գալ և այժմ նրանք շատարածություն, վորը հավասար և ֆրանսիայի մի քանի վում եյին մեկ միջի միջիարդ ֆրանկ...

Վորպեսողի ընթերցողը ավելի ճշգրիտ պատկերացնի իր համար այն, թե ինչպես են գործում կոնցեսիոն ընկերությունները, տանք բնութագիրը մի կոնցեսիոն ընկերության, վորը ահա յերեսուն տարի յե դոյություն ունի: Այդ ընկերության մոնոպոլիային հանձնված տարածության ընդհանուր չափն է 5.600.000 հեկտար 120.000 աղբա-

բնակչությամբ: Վարովչետև բնիկների տնկած բույսերի բերքերը պատկանում են նրանց և կոնցեսիոն ընկերությունը կարող և ձեռք բերել այդ բերքերը միմիայն նեղրերի համաձայնությամբ, դրա համար ել ընկերությունը ամեն կերպ խանգարում է տեղական յերկրագործության գարգանալուն և ծառեր տնկելուն: Ինչպես վերը ասված է, ընկերությունները իրենց շահի 15%-ը պարտավոր են վճարել գանձարանին: Բայց լավ քննելով կոնցեսիոնների և գաղութի վարչության հարաբերությունները, մենք տեսնում ենք, վոր գաղութային գանձարանը միմիայն վնաս է կրում կոնցեսիաների մեջ, վորովհետև ընկերությունը շատ աննշան հարկեր և վճարում իր առետրական գործառնություններից, իսկ մաքսային հարկ համարյա տմենելին չի տալիս: Մի գաղութային չինովնիկ տալիս ե բնորոշ թվական տեղեկություն մի խիստ հետաքրքրական հարցի մասին, այն և՝ վարչության «ողուտների» մասին կոնցեսիոն արտոնություններից: Ազատ առետրի գոտում, վորտեղ տնտեսությունը կոնցեսիոն ընկերությունները մոնոպոլիայի չեն յենթարկել, 10.000.000 Փրանկի բերքերի ինքնարժեքի գինը կազմվում է 3.600.000 Փրանկից, վոր վճարվում ե վորպես հարկ, և 6.400.000 Փրանկից, վոր վճարում են բնիկները: Նույն քանակության բերքերի արտահանությունը կոնցեսիոն հողամասից տակիս և գանձարանին միայն 900.000 Փրանկ հարկ, իսկ բնիկները վճարում են միայն 1.600.000 Փրանկ: Մենք արդեն տեսանք, վոր նեղրերի կոնցեսիոն ընկերություններից ստացած աշխատավարձը հինգ անգամ պակաս է այն աշխատավարձից, վոր ստանում են բնիկները կոնցեսիաների ձեռքը չանցած ուայոններում: Այսպիսով վոչ կոնցեսիոնական գնողների և կոնցեսիոնների մթերած ապրանքների ինքնարժեքի տարբերությունը հսկայական է: Կոնցեսիոնները իրենց գրապահն են դնում ահագին գումարներ, վոր նրանք պիտի վճարեցին գանձարանին և, գլխավորապես՝ տեղացիներին:

Գետք և նշել նաև հետեւյալը: Տեղացիներին կողոպտելը ընկերությունների կողմից շարունակաբար վատացնում է բնիկների տնտեսական գորությունը և թուլացնում է նրանց

վրա հարկեր դնելու հստարավորությունը։ Այս պատճառով վարչությունը շատ անդամ ստիպված է լինում չնչելու կոնս ցեսիաների ռայոններում ապրող սևամորթների հարկերը։ Պարզ է, վոր ինքը, Թրանսիական գանձարանը կորցնում է խո- չոր գումարներ։ Վերը հիշած զաղութային չինովնիկի հաշ- վելով, միմիայն «Վերին Կոնդո» ընկերության հողաբաժնի փրա ապրող բնիկների մասսայի աղքատանալու և հարկավճա- րության ունակությունը կրծատելու պատճառով, գանձա- րանը ամեն տարի կորցնում է 1.000.000 Փրանկից վոչ պա- կաս։ Վոչ պակաս բնորոշ է այն, վոր նույնիսկ այն չնչին հարկերը, վոր դրվում են ընկերությունների վրա, վերջին- ներս հաճախ վճարում են տասնամյա ուշացումով։ Ինքը, գաղութի վարչությունը գտնվում է Համարյա լիովին ըն- կերությունների ձևոքում։ Նույնիսկ Թրանսիական Հասարա- կածային Ս.Փրիկայի նահանգապետները ստիպված են մի- ուում հեռացնելու այս կամ այն ընկերությանը անհաճո գա- վառական չինովնիկներին։ Այդ նույն ձևով բարձր վար- չությունը հաճախ հարկավրկած և լինում վորոշ պաշտոն- ների նշանակել այն չինովնիկներին, վորոնց առաջ և քա- շում կոնցեսիոն ընկերությունը։ Վորովհետեւ կոնցեսիոններ- ները ուժեղ են և այնտեղ, Պարիզում, զաղութային մինիս- տրության բարձր խավերում ունեն կարող գործակալներ և բարեկամներ։ Հետևանքը լինում է այն, վոր առաջ և գալիս վարչական ծառայողների մի կադր, վորը գտնվում է կոն- ցեսիոն ընկերությունների հլու հպատակության ներքո։ Մեծ յիրեակայություն հարկավոր չե պատկերացնելու համար, վոր վարչապետները շատ անդամ իրենք նյութապես շահա- գրգռված են ընկերությունների արդյունքների մեջ։ Բնիկ- ներին կողոպտելու գործում տեղական վարչության և ընկե- րությունների գործակալների մեջ գոյություն ունեցող կազի- մասին մեր ասածը պատկերացնելու համար բերում ենք մի հատված վերը հիշած՝ Հասարակածային Ս.Փրիկայում ճա- նապահորդողի նկարագրությունից։ «Վարչապետի և «Ան- գա-Ռեպանդի» ընկերության ներկայացուցչի, աչքի առաջ շրջանի պետի հրամանով հենց գրասենյակի բակում չարա-

չար ծեծեցին տեղացիներին, վորոնք կառւշուկ ելին բերել Ընկերության պահեստը Բամբեռո քաղաքում, այն պատճառով, վոր նրանք բավարար չափով կառւչուկ չեն բերել։ Տեղա- ցիները կապված չեյին ընկերության հետ վոչ անհատական և վոչ ել կոլեկտիվ պայմանագրով... Յեվ չնայած դրան, վարչապետը կիրառեց նրանց վերաբերմամբ բարձրագույն պատիժը, վորովհետեւ նրան թվացել եր, վոր նեղբերը բա- վարար չափով ակտիվ չեն յեղել կառւչուկ հավաքելում և տուգանիք դրեց նրանց վրա՝ ընկերությունից նրանց համոզ ամբողջ գումարի չափով և ամենամեծ ժամանակամիջոցով բանտ նստեցրեց նրանց։ Բացի դրանից, այն բնիկներին, վորոնք նրան ամենից թույլ եյին թվում (այսինքն կառւչուկի ամենաքիչ քանակությունն եյին բերել), նա յենթարկեց Փիլիփական պատիժ։ Նրանց բեռնավորեցին ծանր գերան- ներով, վորից հետո ստիպեցին վազվել գրասենյակի բակում առանց կանգ առնելու, առավատված ծամի ուրից մինչև կեսորված ժամը տասներկուտրու, մինչև վոր տանջանքը վեր- ջացավ, վորովհետեւ նեղբերից մեկը, Մալինգոն, վայր ըն- կազ։ Հետեւյալ գիշեր նա արդեն մեռած եր։

Մի ուրիշ վարչապետ առհասարակ բանտ եր նստեցնում ամենքին, վորոնք բավականաչափ ակտիվ չեյին կառւչուկ հավաքելում։ Այդ բանտում, — զրում և Փրանսիական հեղի- նակը, — տեղացիները մեռնում եյին «չափազանց ծանր աշ- խատանքի, վատ վերաբերմունքի և անբավարար սննդի պատ- ճառով։ Վարչապետը նույնիսկ հարկավոր չեր համարում բանտում մեռածների համբաւ պահել։

Ընկերությունների կողովում այնպիսի չափերի ելին համանում, վոր Փրանսիական գաղութային մինիստրությունը ստիպված եր ուղարկել Թրանսիական Հասարակածային Ս.Փ- րիկան տեսչական մի հանձնաժողով՝ քննելու նրանց գործ- ներությունը (1928 թ.), իսկ Փրանսիական սենատը, — յե- տաղիմության և իմպերիալիզմի այլ ամրոցը, — 1928 թ. գեկտեմբերի 23-ին սենատոր Մեսամի բերանով հայտա- րաբեց, վոր անթույլատրելի յի վերանորոգել 1929 թվին լրացող կոնցեսիոն ընկերությունների արտօնությունները։

Թե ինչ ազդեցություն են ունենում հարգելի ձեռնարկողները գաղութի տնտեսության վրա, այդ մասին վկայում են հետեւյալ պերճախոս փաստերը: Մինչև 1910 թվականը անտառի մատչելի ռայոնների կառւչուկի ծառերը այնչափ հիմնավորապես պակասել եյին և կառւչուկի մթերելը այնքան դժուկի կերպով ընկել եր, վոր համաշխարհային շուկայում սկսվեց սաստկորեն զգացվել այդ ասլրանքի պակասությունը: Փղոսկրի ձեռք բերելը անասելի դժվարացել եր այն պատճառով, վոր փղերի հոտերը մեծ մասամբ վոչչացված եյին:

Վոչ պակաս վճռական եյին անտառային ընկերությունների «Հաջողությունները» հասարակածային անտառի ամենաարժեքավոր տեսակները վոչչացնելու մեջ: Այդ մասին բոլորովին պարզորոշ հայտարարել ե ինքը՝ դաշութի նաև հանգապետը. «Երանք (անտառային ընկերությունները) վոչչացնում եյին անտառը, առանց հոգալու վաղվա մասին»:

Կոնցեսիոն ընկերությունների բացառիկ շահագործման յենթակա հողամասի ընդհանուր տարածությունը կազմում էր 1923 թվի վերջում 529.840 քառ. կիլոմետր (կամ 52.984.000 հեկտար): Զմոռանանք, վոր ամբողջ ֆրանսիայի տարածությունը հավասար է 551.000 քառ. կիլոմետրի: Այսպիսով միմիայն կոնցեսիոն ընկերություններից շահագործվող տարածությունը պակաս և ամբողջ ֆրանսիայի տարածությունից միայն 3%-ով

Ֆրանսիական Հասարակածային Սֆրիկայի կապիտալիստական յենթակա հողամարկությունների մեջ առանձին տեղ են բռնում պղնձի հանքերը, վորոնք գտնվում են Մինդուկի կոչված վայրում, 150 կիլոմետր դեպի արևմուտք Բրազավիլ քաղաքոց, Բրազավիլ-Ռիվիերանոս շինվող յերկաթուղային դժի վրա: Հանքերի ռայոնը գտնվում է բարձր տեղում, դրա համար ել կլիման համեմատաբար ավելի մեղմ է: Այդ հանդամանքը հնարավորություն և տալիս ապրելու այդտեղ նաև յեվրոպացիներին — մի քանի ինժեներների և տեխնիկների: Հանքերը պատկանում են Փրանսիական «Կոնգոյի հանքային ընկերության»ը: Մշտապես աշխատում են հանքերում 2.000

նեղը բանվորներ և 40 յեվրոպացիներ՝ ղեկավարող անձնակազմը: Հանքերը արտադրում են տարեկան մոտավորապես 1.000 տոննա պղինձ: Բուրժուական հեղինակը, վորի տեղեկություններից մենք ոգտվում ենք այստեղ, վկայում ե, վոր բանվոր նեղերը աշխատում են Մինդուկիում կամովին, առանց վորեւ հարկադրության կողմից: Այդ տեղեկության ճշությունը ստուգել, դժբախտաբար, անհնարին է: Հայտնի յե միայն, վոր ընկերության համար բանվոր հավաքելու գործին ակտիվ ողնում են Փրանսիացի միսիոներները, վորոնք ցրված են ամբողջ գաղութում: Բանվորները ստանում են միջին հաշվով որեկան և Փրանկ, այսինքն՝ 42 կոպեկ, ավելացրած դրան սնունդը: Բանվորական որի տեղության և աշխատանքի այլ պայմանների մասին տվյալներ չկան: Թեև մեր տեղը սուլ ե, բայց հասարակածային Սֆրիկայի այդ միակ հանքային արդյունաբերական ձեռնարկության կազմակերպության մի քանի հետաքրքրական գծերի վրա պետք ե ավելի մանրամասնորեն կանգ առնենք:

Հանքերում աշխատելու համար ընկերությունը հավաքում է բանվորներ գանազան ցեղերից: Միացել բնիկները ուղղվում են միևնույն համքարությունները: Նկատենք, վոր Հասարակածային Սֆրիկայի ցեղերը իրար լեզու չեն հասկանում, այնպես վոր զանազան համքարությունների բանվորները իրար հետ համաձայնության գալ չեն կարող: Յեկ, վորպեսզի խանգարեն այդ պլոտետարներին գործից դուրս ևս իրար մոտենալուն, ընկերությունը տեղավորում է նրանց ապրելու համար՝ ըստ ցեղական նշանների, ձեռնարկության մոտ գտնվող բնակատեղիներում, ըստ վորում առանձին ցեղերի բնակարանները հնարավոր չափով հեռու յեն գտնվում մյուս ցեղերի բնակարաններից: Բանվորների այդ բաժանման պաշտոնական պատճառաբանությունն այն է, վոր կոիմսեր չծաղեն այլացեղ բանվորների մեջ: Բայց իսկապես վոչ թե կոիմսերից, այլ մոտենալուց, այլացեղ պլոտետարների իրար հետ բարեկամանալուցն են վախենում կատպիտական գիշատիչները: Հետո, վորպեսզի բանվոր-

ները յերեակային, վոր նրանք, իբր թե, սեփականության տեր են, ամեն մի բանվորի ոնակին կից հատկացված և մի փոքրիկ կտոր հող: Այդ հողի վրա բանվորին թույլատրվում է աշխատանքից ազատ ժամանակը բանջարեղեն ցանել: Այս ձեռվ դաղութային կապիտալը աշխատում է արհեստական միջոցներով խանդարել Հասարակածային Աֆրիկայում մի կազմակերպված պրոլետարական կադր ստեղծվելուն:

Այդ տեղեկությունները հաղորդող Փրանսիական բուրժուական ժուրնալիստը գովում է ընկերությունը այդքան խելացի «սոցիալական քաղաքականության» համար: Նա մինչև անդամ առաջարկում է հրատարակել մի որենք, վորը պարտավորեցնի Փրանսիական դաղութների բոլոր կապիտալիստական ձեռնարկություններին կիրառելու նույն սիստեմը բանվորներին բաժանելու և խարելու մեջ, վորպեսզի խանգարվի նրանց մեջ պրոպագանդա մղելը: Ֆրանսիական կապիտալիստները հույս ունեն վերը նկարագրված նենք միջոցներով կասեցնել Մարքսի իմաստուն որենքի գործողությունը, վորի համաձայն կապիտալիզմը ինքն և ծնում իր գերեզմանափորին — բանվորական դասակարգը: Մոտիկ առաջան, — ուս կարելի յէ հաստատել ամենայն վճռականությամբ, — ցույց կտա Փրանսիական կապիտալիստներին, վոր նրանց փորձերը իրենց հասարակածային գաղութում պատմական պրոցեսի ընթացքը կասեցնելու վերաբերմամբ անհույս են: Մինդուիլի 2.000 արդյունաբերական պրոլետարները, շատ կարելի յև, գեռես հասունացած չեն դասակարգային գծով: Բայց նրանք ուժ են և այդ ուժը ուել Աֆրիկայի ազատագրման ապագա պայքարի մեջ իրեն ցույց կտա հարկավոր չափով:

Այժմ ծանոթանանք ընկերությունների գործնեյության արդյունքի հետ՝ յերկրից հումույթ արտահանելու և այնտեղ յելքուական ապրանքներ ներմուծելու գործում: Արտաքին առևտորի զարգացման թափը մինչև համաշխարհային պատերազմը բավականաչափ նշանավոր եր: Ահա տվյալներ

նախապատերազմական տարիների ըրջանառության * մասին 1892 թ. — 5,5 միլ. ֆրանկ, 1908 թ. — 27,5 միլ. ֆր., 1913 թ. — 58 միլ. ֆրանկ: Պատերազմի տարիներում ֆրանտօփական Հասարակածային Աֆրիկայի արտաքին առևտուրը սաստիկ կրծատվեց: Յեկ մինչև այժմ ել ըրջանառության աճումը խիստ գանդաղ և կատարվում, միայն 1927 թվին ըրջանառությունը հասավ նախապատերազմական մակարդակին, հաշված վուկի ֆրանկով:

Ահա տվյալներ վերջին տարիների համար.

Թվական	Արտաքին առևտորի ըրջանառությունը ֆրանկ	առնան
1924	91,233,601	—
1925	155,222,463	280,481
1926	275,742,687	332,808
1927	309,067,527	401,136
1928	194,951,293	260,835 **

Ներմուծության մեջ առաջին տեղն, ի՞նարկե, բռնում ե ֆրանսիան, այնուհետև — Բելգիական կոնգոն, Անգոլան և Բելգիան: Արտահանության մեջ առաջինը Բելգիական կոնգոն է, այնուհետև Ֆրանսիան, Գերմանիան, Բելգիան և ուրիշները: Ապրանքների մեծ մասը մտնում է գաղութը Բելգիական Մատադի-Կինշաս յերկաթուղով, վորը անցնում է համընթաց Ֆրանսիական Հասարակածային Աֆրիկայի հարավային աահմանին: Այդ յերկաթուղու ապրանքներ փոխադրելու միջոցները խիստ սահմանափակ են, դրա համար ել բելգիական վարչությունը գերազանցում է առաջին հերթին փոխադրել բելգիական վաճառականների ապրանքները: Այս հանգամանքը կրծատում է Փրանսիական ապրանքների ներմուծության հնարավորությունը: Ֆրանսիական հողի վրա վիճակը (Բրազիլ-Ավելիանոս) յերկաթուղին պիտի ազատի Փրանսիական կապիտալիստներին բելգիական յերկաթուղով ոգտվելու անհրաժեշտությունից:

Գաղութից արտահանվում են բարձրարժեք անառանյութեր շինարարության աշխատությունների և թանգարժեք

* Արտաքին առևտորի ըրջանառության մեջ մտնում են ներմուծումը ու արտահանումը.

** Այս տարվա առաջին յեռամսյակում:

իրեր չինելու համար (1927 թվին արտահանվել է 328.000 տոննա), կառուչուկ, արմավենու ընկույզ, անասուններ, փղոսկր, սուրճ, կակաո։ Ներմուծվում են բրինձ, չորացրած ձուկ, բամբակեղեն գործվածքներ, սպիրու և արալ—այս ամենը դվամակած տեղայինների համար։ Մեքենաներ և ցեմենտ—ձեռնարկությունների համար և այլն։

Վառելանյութերը—նավթ և կերոսին, —մեծ մասամբ ներմուծվում են անընդհատ բազմացող մեքենաների, ավտոմոբիլների և այլն համար։ Նկատվում է կակաոյի և սուրճի արտադրության անկումը, վորովհետեւ, ինչպես ասում են ադարակային ընկերությունների վերատեսուչները, պլանտացիաներում բանվոր ձեռքերը քիչ են։ Նրանց խլում են անտառադրծական ընկերությունները։

Առանձնապես պետք է կանդ առնել կառուչուկի արտահանության վրա։ Ահա մանրամասն տվյալներ վերջին տարին համար։ Արտահանվել է.

1913 թ.	1.600	տոննա
1914 թ.	600	»
1915 թ.	1.400	»
1917 թ.	3.000	»
1920 թ.	2.123	»
1924 թ.	1.408	տոննա
1925 թ.	1.775	»
1926 թ.	1.756	»
1927 թ.	1.763	»

Պատկերը բոլորովին պարզ է։ Կառուչուկի արտահանությունը գաղութից՝ չի բարձրանում։ Նկատելի յե վորոշականից մեծ չափություն այդ ապրանքի արտահանության մեջ։ Դա շատ կարևոր յերկույթ է։ Կարծում ենք, վոր դա կոգնի մեզ պարզելու գաղութի կենտրոնական գոտում տեղի ունեցող վերջին ապահովությաների պատճառները։

Իսկ առհասարակ արտահանությունը գաղութից ավելանում է։ 1928 թվին արտահանությունը, ըստ յերկույթին, գերազանցել է նախադարերազմական արտահանությանը։

բ) ԲՐԱԶԱՎԻԼ-ՌԵՎԻԱՆՈՍ ՑԵՐԿՎԹՈՒՂՈՒ ԿԱՌՈՒՑՈՒՄԸ

Դեպի Ֆրանսիական Հասարակածային Աֆրիկան կատարվող կապիտալիստական արշավի յերկրորդ ձեւն ե յերկած թուղությունը Բրազավիլ քաղաքից, վոր գաղութի

մայրաքաղաքն է, ունի ովկիանոսը։ 1926 թվի ոգոսահամաստմ Պարիզում բաց թողնվեց 300.000.000 ֆրանկի փոխառություն հատկապես այդ յերկաթուղու շինության Փոնդ սուելծելու համար։ Այդ գործարին մետրոպոլիայի* կառավարությունը ավելացրեց ելի 93.000.000 ֆր։։ Աշխատանքները սկսվել են 1922 թվին միաժամանակ յերկու ծայրերից—Բրազավիլից և Պուանտ-Նուար քաղաքից, վոր գտնվում է ովկիանոսի ափին։ Ծինվող ճանապարհի յերկարությունն է 550 կիլոմետր։ Յենթաղբազում եր վերջացնել նրա շինությունը 12 տարում։

Ճանապարհի շինությունը հանձնվել է Պարիզի «Բատինյու» Փիբումային։ Դա մի չափազանց չնչին Փիբումա յե իր գրամագլխով և տեխնիկական միջոցներով։ Դրա փոխարեն նա ուներ մի այնպիսի առավելություն, վորը չուներ վոչ մի նույնանձնան ձեռնարկություն Ֆրանսիայում։ Այդ ընկերության գլուխն եր կանգնած այն ժամանակվա տիրող հանրապետական կուսակցության նշանավոր լիդերի ազգականը։ Գաղութային մինիստրության հետ կնքած պայմանագրի մեջ ասված չե, թե ընկերությունը պարտավոր է կիրառել շինության գործում նորագույն կատարելազործված մեքենաներ և գործիքներ։ Դրա փոխարեն կանխատեսական կուսակցության նշանավոր լիդերի ազգականը։ Կաղութային մինիստրության հետ կնքած պայմանագրի մեջ ասված չե, թե ընկերությունը պարտավոր է վճարելու թիվը, այդ գեպօւմ գանձարանը պարտավոր է վճարելու ընկերությանը չոգտագործած մարդութերի թվի համապատասխան գումար, վորպես հասուցում։ Դրա հետեւ վանքն այն եր, վոր պատվարժան ընկերությունը յերկար ժամանակ իր հիմնական յեկամոււր ստանում եր վոչ թե ճանապարհը շինելու համար, այլ հենց այդ փոխհատուցումից։ Վորքան իից գործ եր կատարվում, այնին ավելի յիշի փաղ գոփում գանձարանից նարպիկ արդյունաքերողները։ Զարմանալու կարիք չկա, վոր ընկերությունը ամենին արժեք չեր տալիս նեղբերի կյանքին։ Բանվորական ուժի պակասությունը մեծ ողուտով ծածկվում եր այն փոխ

* Մետրոպոլիա կոչվում է այն պետությունը, վորը գաղութներ ունի

հատուցումից, վոր առատությամբ վճարում եր սիրալիք գանձարանը:

Հիրավի, հենց գործի սկզբում շատ սուր ցցվեց բանվորական ուժի հարցը: Վերը նշած պատճառները անհնարին եյին դարձնում ազատ բանվորական ձեռքեր գտնելլ: Ստիլված եյին միանդամից պարտադիր աշխատանք պահանջելու ազգաբնակչությունից: Սկզբում սկսեցին հավաքել հարևան յերկներից, գլւավորապես Դաբոնի ափերից: Բայց այստեղ խիստ կերպով բողոքեցին կոնցեսիոն ընկերությունները: Այդ ըջանի բնակչությունն այնքան նվազել եր, վոր պետական բանվորահավաքը սպառնում եր կոնցեսիոն աշխատանքների դաշտարեցնելուն: Յերկարամե արյունաքամությունը, վոր գործադրել եյին Փրանսիական ձեռնարկողները տեղական բնակչության վերաբերմամբ, ծննդաբերության սրբնիաց նվազման հետ միասին սպառնում եր բնակչության խպառ ջնջումով և բանվորական ուժի անհետացումով յերկրից: Այդ պատճառով գեպի կապիտալիստները հաճոյակատար և պատրաստակամ նահանդապետը հրահանդեց ազգանել Դաբոնի նեղբերին յերկաթուղու վրա աշխատելու պարտականությունից: Սկսեցին բանվորահավաքը միմիայն մնացած ըջանների — Միջին Կոնգոյի, ՈւրանդիՇարիի և Չաղի — բնիկների մեջ: Այսպիսով Փրանսիական կապիտալիստների խաթեր համար գաղութային վարչությունը սկսեց քշել գեպի ծայրագույն հարավ, վորտեղ կատարվում եր յերկաթուղու շինությունը, սկամորթներին ամենահեռավոր գոտիներից, վորոնց կլիման, ինչպես առված ե վերը, սաստիկ զանազանվում ե ապագայ յերկաթուղու ռայոնի կլիմայից: Անսովոր լինելով և կլիմային, և ծանր սիստեմատիկ աշխատանքին և, վերջապես, սննդի նոր ռեժիմին, բնիկները հիվանդանում եյին փորհարինքով, թռերի բորբոքումով, թռքախտով:

Թեև բանվորական կաղը փոփոխությունը կատարվում եր վեց ամիսը մի անգամ, մահացումը աշխատանքների մեջ մի քանի անգամ բարձր եր բնակչության սովորական նվազումից այդ յերկրում: Բայց և այնպէս, աստիճանաբար ան-

տառի մեջ խորանալով, կենսամթերքները, նյութերը և մարդկանց տեղափոխում եյին նոր չինված յերկաթագծերով: Այդ նորյան ճանապարհով փոխազրում եյին նաև հիվանդներին: Բնդհանուր առմամբ դրանք միայն ծաղիկներն եյին, պառղղուները պիտի հրապարակ դային հետո:

1925 թվին գաղութում նոր նահանգապետ նշանակվեց: Արդյոք Փրանսիական կառավարությունն եր նրան այդորինականդ տվել, թէ ինքը «նոր ավելլը» ցանկանում եր իր տերերի աչքին յերեալ, բայց փաստն այս եւ նոր նահանգապետը հրամայեց ավարտել ճանապարհի շինությունը վոչ թէ 12 տարում, ինչպես յենթադրվում եր առաջ, այլ 5 տարում: Այդ նպատակով նա հրահանդեց սկսել աշխատանքներ նաև նախագծված ճանապարհի միջին մասից (այլ վոչ միայն յերկու ծայրերից, վոր կատարվում եր միջև այդ): Այն ինչ ճանապարհի միջին մասը շինարարության տեսակետից անհամեմատ ավելի դժվարին ե, քան յերկու ծայրերից շինելլը: Վորովհետեւ այստեղ ճանապարհը պիտի կարի Մայումբու կոչվող բարձր ու զարիվայր լեռնագոտին, վորը վերև հիշած Բյուրեղյա սարերի շարունակությունն ե: Վորպեսզի ընթերցողը գաղափար կազմի այդ մասում կատարվելիք աշխատանքի դժվարության մասին, բավական և ասել հետեւյալը. սկզբնական հետազոտությունները շույց տվին, վոր տեղադրությունն այնքան կտրված ե, վոր այդ հողամասի 50 կիլոմետր տարածության վրա պիտի փորել տասնյոթ տունել և շինել յերեսուն և հինգ կամուրջ: Դրա վրա ավելացրեք և այն, վոր այդ ամբողջ հողամասը ծածկված ե բոլորովին անանցանելի կուսական անտառով: Հսկայական ծառերը խճողված են իրարու հետ՝ ամուր կպչող սողացող բույսերով: Յերկիրը՝ ծածկված ե խիտ ու ծակոտող թփերով: Անտառի ցած ընկած տեղերում կան խոր ճահիճներ, վորոնք լիքն են հսկայական թունավոր խեղներով և ոճերով: Հենց վոր արեւը մայր ե մտնում (ի դեպ, նրա ճառագայթները համարյա վոչ մի ժամանակ չեն թափացնում խիտ տերեների միջից) և մինչեւ առավայրան ժամի 10-ը անտառի վրա կախված ե թանձր մառախուղ: Այդպես և

ամբողջ տարին, որեցոր : Այդ մթնոլորտի մեջ վոչ մի ժամանակ և վոչնչ չի չորանում, — վոչ հաղուստը, վոչ ճերմակեղենը և վոչ ել մարմինը :

Գաղութների պետական աշխատանքների վարչության պետը նախատեսնում էր այդ գերմարդկային գժվարություններն և նեղըների մահվան ուսագին քանակությունը, վորը պահանջվում էր Մահումբեյի վրա աշխատանքներն անմիջապես սկսելու համար : Նա առարկեց : Նա ընդգծում էր, վոր առանց այդ ել բնիկների ուժից վեր աշխատանքը ավելի ևս կրարդվի նրանով, վոր անձնարին և շինանյութեր, կենսամթերքներ և մարդկանց փոխադրել այնտեղ, վորորվհետև այդ հողամասը առանձնացած է ամբողջ շինարարությունից և վոչ մի ճանապարհ չկա այնտեղ : Այդ պատճառով խոսք անդամ չի կարող լինել այն մասին, վոր Մայումբա հասցնեն նույնիկ ամենահասարակ գործիքներ, վորոնք գործադրվում են յերկաթուղու ծայրերի շինարարության մեջ : Ուստի աշխատանքների պետը խնդրում է վերացնել Մայումբայի հողամասում անհապաղ աշխատանքներ սկսելու հրամանը : Բայց նահանգապետը պնդեց իր ասածի վրա :

Հասկանալի յէ, վոր շինարարությունը արագացնելու և աշխատանքները նոր աշխատավայրում սկսելու համար հարկավոր և ավելացնել բանվորահավաքի կանչվողների քանակությունը : Վերը մէնք ասացինք, վոր շինարարության առաջին տարիները տեղայիններին քշում եին դյուդերից վեց ամսով : Նոր նահանգապետը հաշվեց, վոր բանվորական կաղըների այլպիսի հաճախակի փոփոխությունը մեծ արգելք և հանդիսանում աշխատանքների ուժեղ թափի համար : Հերավի, ինքը, նեղըների բանվորահավաքը (մորթիվացիա) զգալի ժամանակ և միջոցներ եր պահանջում : Դրա համար հարկավոր եր լինում վեց ամսուր մի անգամ ուղարկել հեռավորագույն ռայոնները ֆրանսիայի շինովնիկներին զինվորական խմբերով : Բանվորահավաքի կոչվածներին տեղ հասցնելը յերբեմն տեսում է 18 ամիս : Հետո նորեկները սկզբում պատճառով : Ստիպված՝ նրանց մի քանի շարաթ թող-

նում են խրճիթներում (մինչև վոր նրանք, մի քիչ սովորելով կիմային, նորից հիմքանդանան՝ այս անգամ աշխատանքի ժամանակ) : Շինարարության գործի համար կենարոնացնում են բնիկների մասսաները բոլորովին տարրեր շրջաններից : Այդ ամբոխը խոսում է ավելի քան յերեսուն լեզվով : Անհրաժեշտ է լինում համակերպվել այդ բարելունական խառնաշփությանը՝ նշանակելով մի լեզվով խոսող բնիկների համար իրենց վերակացուներին (գյուղական տանուտերներից, ցեղական կամ տոհմային առաջնորդներից) : Այնուհետև հարկավոր և գործ դնել բավական ժամանակ սովորեցնելու անտառի, տափաստանի և անապատի այդ զավակներին յեվրոպական ամենահասարակ գործիքներից ողտվելը : Այս ամենը շինարարության սկզբնական շրջանում առաջ եր բերում բնդմիջումներ աշխատանքի մեջ, վորոնք յերբեմն շատ յերկար ելին տեսում : Յեվ ահա նոր նահանգապետը հրամայեց յերկարացնել բանվորահավաքի ժամկետը մինչև 2 տարի : Բացի գրանից, աշխատանքի կոչվող նեղըների քանակությունը ավելացավ 6.000—7.000-ից մինչև 14.000-ի : Այդ թվի մեջ ընտրում եյին ամենաշահագել և առողջ բանվորներ այն 40.000 հոգուց, վորոնք պարտավոր են գալու բանվորահավաքի վայրերը :

Ծանոթանանք այժմ սկսամորթների աշխատանքի պայմաններին յերկաթուղու կառուցման մեջ : Աշխատանքի կոչվածների խմբերին ուղեկցում են մի կամ մի քանի սկսամորթ զինվորներ : Ճանապարհի համար տալիս են սնունդ չափազանց անբավարար չափով : Նեղըների անպատճանությունը և շինովնիկների ամեն հակողությունից դուրս գըտնվելը ստեղծում են լայն հնարավորություն՝ խարդախություններ կատարելու սննդի փայտերը բաժանելու գործում :

Կոչվածների մի մասը մահանում է ճանապարհին՝ նույնիսկ վոչ թե Փիզիքական զբկանքներից, այլ հալումաշ անող կառուցից, ազատության, հայրենի դաշտերի և ընտանիքների, լայնածավալ տափաստանների, անապատի այրող հարթության մասին մտածելուց... Բրազիլի տեղական հիվանդանոցում, — պատճառով : և մի ծայրահեղ հետադիմական ժուր-

նալիստ, — նա տեսել ե մի խումբ հիվանդ տեղացիների, վորոնք նույնիսկ աշխատանքի վայրն ել չեն կարողացել Հասնել: Նրանց աչքերը պապղում եյին տհնդային փայլով, դեմքերը չորացել եյին այն աստիճան, վոր հիշեցնում եյին մումիաներին: Մշտական կարոտը, ծուռումուռ քայլվածքը, մշտական ապատիան (անտարեր վերաբերմունքը դեպի շրջապատը) և անսահման թախիծը — ահա նշանները այն հիվանդության, վորի եյությունը հիվանդանոցի բժիշկները վոչ մի կերպ չեն կարողանում վորոշել: Ժուրնալիստը կարծում ե, վոր նեղբերին սպանում ե հայրենիքի կարուր: Յեվ այսուամենայնիվ նա որինական է համարում, վոր վարչությունը նրանց տուն չի թողնում գնալու: Զե՞ վոր յերկաթուղին պիտի շինվի...

Ճանապարհի վրայի աշխատանքը, ինչպես հիշել ենք, չափանց դժվար ե: Բայց մանավանդ դժվար ե նա Մայումբայի մասում: Վոչ մի մեքենա կամ մեխանիկական գործիք չկա անտառը կտրելու համար: Մի քանի մետր լայնություն ունեցող ծառերի բուները նեղբերը սկիսի կտրեն սովորական կացնով: Հետո նրանք հանում են հողից ահագին կոճղը, ձեռքերի վրա տանում են գծից հեռու, անտառի խորքը: Շատ հաճախ նեղբերը աշխատում են մինչև գոտին ճահճի մեջ կանգնած: Վորովհետեւ վոչ մի մեքենա չկա, այդ պատճառով ել նեղբերը առաջին տոննելլ 132 մետր յերկարությամբ փորել են հասարակ թիակներով: Այդ աշխատանքի վրա կորել ե յերե՛ք տարի: Հեշտությամբ կարելի յե պատկերացնել, թե ինչքան մարդկային կյանքեր են փչացել այդ ժամանակ և ինչ կարժենա նեղբերին վերջին տոննելի փորելը, վորը պիտի ունենա 1.700 մետր յերկարություն: Մի կածան անդամ չկա Մայումբայում: Այդ պատճառով ուտեսատեղենի հակերը աշխատանքի վայրը հասցնում են քարշ տալով իրենց վրա: Դուրս ե գալիս, վոր մի նեղը կարող ե մի անդամում կրել կենամթերքը՝ բարձելով չորս հողու և իր վրա, վորովհետեւ կրողները սայթագում են բուների վրայից, ստիպված են իինում սովալով անցնել ընկած ծառերի վրայով, ցատկել մի ճյուղից

մյուսը, անցնել գետակների և ճահճների միջով: 10 կիլոմետրից ավելի այդ տեսակ բնունակիրը չի կարող անցնել: Կենսամթերքներ հասցնելու դժվարությունը պատճառ ե դառնում սեամորթների մննդի անբավարարությանը շինարարության մեջ ընդհանրապես և Մայումբայում մասնավորապես: Ել չենք խոսում չինովիկների հավշտակությունների մասին: Սննդի պակասությունը և աշխատանքի գերմարդկային դժվարությունները առաջ են բերում՝ պետական աշխատանքների վարչության պետի պաշտոնական զեկուցման համաձայն՝ այս տեսակ յերեւոյթներ. Մայումբայի ճահճներում մի քանի որ աշխատելուց հետո նեղը մարմինը ծածկվում ե խոցերով և թարախակալած վերքերով: Խեղդող խոնավ տոթը ցերեկով և գիշերվա ցուրտը առաջցնում են թոքերի բորբոքման հիվանդություններ: Իսկ փորհարինքը և ջերմը ամենասովորական և նորմալ հիվանդություններն են աշխատողների ամբողջ կոլեստիվի համար: Վոչ մի բժշկական ոգնություն Մայումբայում գործնականացներն չկա: Միակ Փելդշերը, վորը սպասարկում ե Մայումբայի մասը, հայտնի բան ե, անկարող ե բժշկել 3.000 նեղը բանվորներին և մեկ ու կես տասնյակ յեկրոպացի տեխնիկներին և ոֆիցիերներին: Հետաքրքիր մանրամասնություն. այդ միակ Փելդշերը, վոր կորած ե Հասարակածային ԱՓրիկայի կուսական անտառում, — ուստի Յերեկի դա ճերմակ զորքերի և Վրանդելի կամ Դենիկինի Փելդշերներիցն ե (Փրանսիական կառավարությունը չի թույլ տալիս ուստի ճերմակ-գվարդիական եմիգրանտ բժիշկներին պրակտիկայով պարապելու քրանոխացիների մեջ, բայց ուրախությամբ ուղարկում ե նրանց գաղութները, վորտեղ Փրանսիացի բժիշկները չեն ցանկանում գնալ):

Մայումբայում աշխատանքները անհապաղ պկանելու հետեւ վանքները անմիջապես յերեացին: Ահա թե ինչ ե գրում մի բուրժուական ժուրնալիստ Փրանսիական հետադիմականներմանակ» լրագրում 1929 թ. փետրվարի 12-ին. «Մայումբայի ուարերում աշխատելու հենց առաջին ամիսների ընթացքում այստեղ քշված բոլոր նեղները վոչնչացան (մի մասը հիվանդացների վշված բոլոր նեղները վոչնչացան (մի մասը հիվան-

հացավ, մյուս մասը մեռավ) վոմանք փորհարինքից (անդի սակասության և մաքուր բնակարանների բացակայության պատճառով), մյուսները—թոքերի բորբոքումից (կլիմայական պայմանների չնորհիվ), յերրորդները—քաղցից (կենսամթերքների մատակարարման վատ դրույթի պատճառով), չորրորդները—հյուծվելուց (ուժից վեր աշխատանքների պատճառով): Եթե շինարարության ծայրերում մահացումը ահագին եր, ապա Մայումբայում մի ամսվա աշխատանքից հետո, 1925—1927 թ. թ. շինարարության ընթացքում շարքից դուրս եյին գալիս համարյա ամենքը: Նույն ժուրնալիստը հաղորդում է, վոր 1929 թ. ամառը, յերբ Մայումբայի աշխատանքի պայմանները մի քիչ լավացել եյին (մենք այդ կտեսնենք վարը), մահացումը կաղմում եր բանվորների ընդհանուր թիվ 5%-ը յուրաքանչյուր ամիս: Դա մի սարսափելի թիվ է, վոր նշանակում է, թե տարեկան մեռնում ե բանվորների վարսուն տոկոսը: Մեր աղբյուրը, սակայն չի հաղորդում, թե ինչքան մարդ է շարքից դուրս յեկել նույն 1929 թին հիվանդությունների պատճառով... Զի ցույց տալիս նաև Մայումբայի մեռածների թիվը մինչև այնտեղ պայմանների վորոշ բարելավումներ մտցնելը 1928 թվի կիսում:

Իբրև պատասխան առանց այդ ել բարձր մահացումի հսկայական զարգացմանը նեղերի մեջ, նահանգապետը հրամայեց ուժեղացնել բանվորների մորթիվացիան: Թե ինչ աղջեցություն ունեն յերկաթուղու շինության աշխատանքները գաղութի ամրող աղջաբնակչության վրա, — մենք մանրամասն կիսունք վարը: Այստեղ նշենք, վոր նեղերի հսկայական մահացման տեղեկությունները յերկակաթուղու կառուցման մեջ Հասարակածային Աֆրիկայում հասան 1926—1927 թ. թ. յեվրոպական մամուլին և Փրանսիական հասարակության և բանվորական շարժման առաջավոր տարրերին: Բարձրացավ սաստիկ աղմուկ, վորը սովորեց գաղութի վարչությանը ձեռք առնել վորեւ միջոցներ՝ պակասեցնելու «չափազանց մեծ մահացումը», ինչպես արտահայտվում է մի իմպերիալիստական վայրահաջ դրող: Սահ-

մանվեց սննդի ավելի կանոնավոր մատակարարություն, փայլ ավելացրին: Բացի դրանից, կարդաղքվեց տալ բնեվորներին վերմտիներ, ստպան, ամաններ կերակուր յեփելու համար: Մտցվեց ավելի լայն քժշկական ողնություն: Սկսեցին մեծ չափով պատվաստումներ անել քնեածության հիվանդության դեմ: Շինեցին մի քանի բուժարաններ և հիվանդանոցներ: Հետո փոխեցին նորեկների կաղրերը գործի գցելու ռեժիմը: Նորեկներին վորոշ հանդըսդառնություն եյին տալիս, վորից հետո, վորպեսզի նրանք ընտելանան կլիմային, սկզբում հանձնում եյին նրանց թեթև աշխատանքներ և միայն զրանից հետո նրանց ուղարկում եյին դժվարագույն աշխատանքների: Շինվեց խճուղի, ապա յերկաթուղուն համընթաց և նեղուղիներ՝ նյութեր փոխադրելու համար: Բայց «նոր ռեժիմի» ժամանակ ել բնիկները աշխատում են փոխանակ սահմանված 9% ժամի—11 և 12 ժամ որեկան: Կիրակի որերը, փոխանակ սահմանված հանգստության, նրանք պարտավոր են ծառայելու պահ: Վերակացուներին՝ լվանալ ձերմակեղենները, նորոգել բնակարանները և այլն:

Մահացության դեպքերի և վեներական հիվանդությունների պակասեցման համար, վոր չափազանց տարածված են սեամորթ բանվորների մեջ, թույլ և տրվում նրանց բերելի բրենց ընտանիքները: Ընտանիքավորներին թույլ և տրվում շինել առանձին խճիթներ և բանջարանոց ունենալ:

Թե վորքան կենսական եյին վարչության միջոցառումները աշխատանքի կոչված բանվորների մասսայական մահացումը թուլացնելու գործում, այդ մասին կարելի յեղատել նահանգապետի ծանուցումից, վոր նա արել և 1928 թ. նոյեմբերին: Նահանգապետը նշել է, վոր մահացումը դեռևս բավականին «զգալի յե»:

Ըստ յերկույթին հենց այս պատճառով այժմ նկատվում ե ձգտումն կրծատելու տեղացիների բանվորահավաքը յերկաթուղու կառուցման համար: Լրագրները հաղորդում են, վոր պետության և ճանապարհը կառուցող ընկերության մեջ համաձայնություն և կայացել՝ ամենամինիմալ չա-

փերի հասցնել տեղացի բանվորների քանակը։ Դրա վորսարկությունը խոստանում է տալ ընկերությանը նորագույն մեքենաներ, վորպեսզի աշխատանքները ամենամեծ չափով մեխանիզացման յենթարկվեն։ Միաժամանակ վորոշչած է մտցնել գաղութը՝ յերկաթուղու կառուցման մեջ աշխատելու համար հնդկաչինական սկալործ բանվորներին, վորոնք կոչվում են «կուլի»։ 1929 թվին տեղափոխվել են այնտեղ 800 կուլիներ։

ԱՀա տվյալներ ճանապարհի վրա աշխատող սկանորթ-ների աշխատավարձի մասին. նրանք ստանում են որեկան մի Փրանկ և 75 սանտիմ, իսկ վերակացուները ստանում են յերկու Փրանկ: Այս բնիկները, ովրոնք հոժարակամ վերադառնում են իրենց ժամանակամիջոցը լրանալուց և տունը այցելելուց հետո և նորից ուզում են աշխատել, ստանում են յերկու Փրանկ և 25 սանտիմ, իսկ վերակացուները — յերկու Փրանկ և 50 սանտիմ: Այս թվերը վերաբերում են 1929 թվականին:

Տուն են վերադառնում բնիկները նույնպես զինվորական հսկողության տակ և այդ դեպքում վերադարձի ամբողջ ընթացքում նրանց ոդագադործում են հողային աշխատանքների, ճանապարհների նորոգության և նոր ճանապարհներ շինելու համար։ Իսկ վորպեսզի սեամորթերը չփախ-չեն աշխատանքներից կամ տուն վերադառնալիս, նրանց աշխատավարձի մի մասը չեն տալիս նրանց կանխատեսորեն, այլ ուղարկում են նրանց բնակության տեղը։ Միայն տուն վերադառնալուց հետո բնիկը կարող է ստանալ իր աշխատավարձի չստացած մասը։ Այսպիսով վարչությունը հնարավորություն ունի ստուգելու ներքերի վարքը և՝ աշխատանքի ժամանակ, և՝ տուն վերադառնայիս։

Աշխատանքի վայրը համելու ճանապարհորդությունը, ինչպես ասացինք, միջին հաշվով տևում է տասնութ ամիս։ Մնում են նեղերը յերկաթուղու կառուցման աշխատանք-ների վրա մոտ յերկու տարի։ Վերադարձը նույնպես խլում է նրանցից այնքան ժամանակ, վորքան գործի դալը։ Հետե-գարար, բնիկը իր անից բացակայում է չորսից մինչև հինգ տարի։ Աշխատանքի վայրը համելու համար կատարված

շարժման ժամանակ բանվորահավաքի կոչվածների մեջ մահացումը հասնում է 15%-ի, իսկ աշխատանքների ժամանակ հասնում է արդեն 37%-ի: Կան տեղեկություններ, վորոնք հաստատում են, վոր աշխատանքի կոչվածների միայն մի հինգերորդ մասն և վերադառնում տուն:

5. ԳԱՐՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՏԵՂԱԿԱՆ
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ՆԵԳՐԱԿԱՆ
ՄԱՍՍԱՆԵՐԻ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ

iii) Ազգաբնակչութեան ԱձուՄԸ

Տեսնենք այժմ, թե ինչ փոփոխություն ե ռանեցել աղ-
րանակը ության թիվը Քրանսիական տիրապետության տա-
ներում : Այստեղ պետք է ամենից առաջ ընդգծել, վոր սովը
անսսիական գրավման որից դարձել ե սովորական յերե-
ւոյթ : Պաշտոնական տվյալները, վորոնք ամենից քիչ կա-
զող են դրությունը ներկայացնել ավելի վատ, քան կա-
կականում, վորոշակի ասում են, վոր 1914 թվի սովը
ռաջ և բերել «սոսկալի կոտորած ցեղերի մեջ» Միջն-
անդոյի գավառում : 1928 թ. ղեկուեմբերին արտասահմած
ճառի մեջ գաղութի նահանգապետը հրճվանքով ասել ե-
նականում : Դա նոր եղ գաղութի յերկու գաղութում սովը ավելածումներ
անում : Դա նոր եղ ե գաղութի պատմության մեջ» : Այս-
իսով Ֆրանսիական Հասարակածային Աֆրիկայի բարձրա-
ույն վարչապետը հաստատում է, վոր սովը վոչ մի ժա-
անակ չի դադարել յերկրում : Վորովհետև միայն վերջին
յերեք տարին ե, վոր սովը չի վոչնչացնում դադութի-
ւամորթ բնակչությունը (յեթե նույնիսկ ընդունենք, վոր
սահանգապետը չի գունավորում իրականությունը) : Նա-
որդ տարիներում, ուրեմն, սովի աղեւները սովորական
հաստեղ են յեղել :

Հակոսի վերաբերմամբ ընկիները սննդի հարցից Հեռուն չեն գնացել։ Նրանք առաջվա նման մերկ են կամ համարյա մերկ։ Մի ճանապարհորդ պատմում ե, վոր նրա բեռնակիր նեղուերը դիմերելու համար կանդ առած ժա-

ժանակ այնպիս եյին տանջվում ցրաից (վորովհետեւ համարյա տկլոր եյին), վոր թաղվում եյին ավագի մեջ և այդպես քնում:

Հիվանդությունները բնիկների մեջ այնքան են տարածված, վորքան և մինչև ֆրանսիական հափշտակիչների գալր: Ավելին կասենք. կարելի յէ վճռականորեն հաստատել, վոր հիվանդությունները չափազանց սաստկացել են հենց ֆրանսիացիների նվաճումից հետո: Բնիկների տեղափոխությունները շատ չնշին եյին մինչև յեվրոպական նվաճումը: Ամեն մի շրջան ապրում եր իր առանձնակի կյանքով ժրանսիացիների գալը պատճառ դարձավ սահմանելու մի շարք պարտադիր աշխատանքներ, վորոնց չնորհիվ այդ պարտադիր աշխատանքները կատարողների զգալի մասը պարտավոր եր գնալու յերկրի հեռավոր վայրերը: Միանգամայն պարզ ե, վոր պարտադիր աշխատավորների, բեռնակիրների, փոստը տանողների և պահապանների տեղափոխությունները պիտի նպաստեյին հիվանդությունների տարածմանը: Այդ փաստը բացարձակորեն հաստատվում և գողութը հետազոտողների կողմից.

Բոլոր հիվանդություններից, վորոնք ավերում են շառարակածային Աֆրիկայի բնիկներին, ամենածանրը «քնեածության» հիվանդությունն ե», վոր կայանում և հետեւյալում: Տրոպիկական «ցեցե» կոչված հատուկ տեսակի խայթելով մարդուն, նրա արյան մեջ մտցնում ե մի մեկըրոր, վորը հայտնի յէ բժշկության մեջ «տրիպանոզմ» անունով: Այդ միկրոբը առաջ և բերում ուղեղի ռորբոքում: Սկզբնական շրջանում հիվանդը շուտ հոգավագակ և անտարբեր ե դառնում դեպի կյանքը, զգում և դիմացավ և ամենաուժեղ քնեածություն: Հիվանդության յերկրորդ շրջանում սկսվում է տենդ, սրտի անկանոն գործնեյություն, ձեռների և վոտների դողոց: Հիվանդը թուլանում ե, վոտները շաղվում են, քայլվածքը դառնում և յերերուն: Ամբողջ ժամանակ ուզում ե քնել: Քանի զնում, այնքան ավելի յերկար և քնում: Զարթնեցնել նրան դժվար է: Հիվանդության յերրորդ շրջանում հիվանդի կաշվի վրա յերևան են գալիս բշտիկներ, ամբողջ մարմինը ծածկվում

և ուսուցքներով: Մկանները վերջնականապես թուլանում են: Վոսկորների ցավը անհնարին և դարձնում վորեւ շարժում: Սկսվում ե ջղային-հոգեկան քայլքայումն: Առաջ ե գալիս հաճախակի ուշագնացություն: Սուր գրգռմունքը փոխվում ե մեռած քնեածության: Հիվանդությունը տեսում ե յերկու ամսից մինչև յերկու տարի: Հիվանդը մեռնում ե ծայրահեղ հյուծված: Այստեղ կարեոր ե նկատել, վոր քնեածության հիվանդությամբ, ինչդեռ և հիվանդությունների մեծ մասով, ավելի ուժեղ հիվանդանում են թույլ, հյուծված որպանիզմները, քան առողջ: Դրա համար նեղուերը այդ հիվանդությանը ավելի շատ զոհեր են տալիս, քան առողջ յեվրոպացիները: Տրոպիկական Աֆրիկայի լճերի շրջաններում այդ սոսկալի հիվանդությամբ բռնվածների քանակը հասնում ե ազգաբնակչության ուրախության տոկոսին: Ամբողջ ավաններ, նույնիսկ շրջաններ արդեն վոչչացված են այդ հիվանդությունից: Որինակ՝ Նջոնդու և Բուբանգի գյուղերը (նրանք դտնվում են Ուբանգի գետի բերանի մոտ) միայն մի քանի տարի սրանից առաջ ունեցին՝ առաջինը — 1.000 և յերկրորդը — 800 բնակիչ, իսկ 1929 թվին մնացել եյին նջոնդում 6 և Բուբանգում 8 մարդ: Մնացածները մեռել են քնեածության հիվանդությունից (կամ վոչչացել են պարտադիր աշխատանքներում): Յեվ ահա մինչև վերջին տարիներս գալությային վարչությունը այդ հիվանդության դեմ համարյա վոչ մի պայքար չեր մղում, իսկ 1929 թվին յերկրի առողջացման գործի համար բաց ե թողել միայն տեղացիներից հավաքվելիք հարկի տասնհինգերորդ մասը...

Քնեածության հիվանդության հետ միասին կատաղությամբ գործում են նաև թոքախտը և աղիքների հիվանդությունները: Սաստիկ տարածված և սիֆիլիսը, վորի ծավալման մեջ գլխավոր գերը կատարում են, իհարկե, պարտադիր աշխատանքները: Տղամարդկանց մասսայական խոնվելը յերկաթուղու կառուցման և անտառային ձեռնարկությունների մեջ առաջ ե բերում պոռնկության զարգացում: Դրան միանում ե յեվրոպացիների կողմից պատվաստվող արբեցողությունը (վերը մենք մատնանշեցինք,

վոր արբեցուցիչ խմիչքների ներմուծությունը տարեցտարի ավելանում է) :

Այս ամենից հետո հարկ չկա ապացուցելու, վոր խրո-
նիքական սովի և նեղրական բնակչության այլ դժբախտու-
թյունների պատճառը գլխավորապես Փրանսիական իշխանու-
թյունների քաղաքականությունն է։ Պարտադիր աշխա-
տանքները հեռացնում են գյուղերից ազգաբնակչության լա-
վագույն տարրերը։ Դրա անմիջական հետևանքը լինում է
այն, վոր կրծատվում են ցանքսի հրապարակը և կենսա-
մթերքների արտադրությունը։ Յերկրորդ հետևանքն է
ծննդաբերության կրծատումը։ Յերրորդ՝ ազգաբնակու-
թյան տղամարդկանց և կանանց մի փոքրիկ մասը, վոր
առողջ և, հիվանդանում և պարտադիր աշխատանքների
վրա (յեթե չի վոչնչանում մինչև աշխատության վայրը
հասնելը)։ Զորբորդ՝ հաճախ աշխատանքի կոչված սեա-
մորթները մեռնում են հենց աշխատանքի մեջ։ Վեներական
ախտերի ծավալումը տալիս է հիվանդ յերեխաներ և կամ
դադարեցնում է ծննդաբերությունը։ Դրան պետք է ավե-
լացնել կոնցեսիոն ընկերությունների քաղաքականությունը,
յերբ, ինչպես ասացինք վերը, արգելում են տեղական յեր-
կրագործությունը, հետևաբար՝ խանդարում են գյուղական
տնտեսության դարպացմանը և գյուղի կենսամթերքների
միջոցները ավելացնելուն։ Հաջի առնելով այդ ամենը,
մենք կհասկանանք Ֆրանսիական Հասարակածային Սֆրի-
կայի ազգաբնակչության արագընթաց կրծատման պատ-
ճառները։ Ահա պերճախոս տվյալներ այդ կարեռագույն
հարցի մասին։

<i>Շըջանների անունը</i>	<i>Ազգայինակառության թիվը</i>
	<i>1914 թ.</i>
<i>Գաբոն</i>	<i>1,050,000</i>
<i>Միջնի Կանգո</i>	<i>900,000</i>
<i>Աւրանդի-Շաբի</i>	<i>1,350,000</i>
<i>Զագ</i>	<i>1,650,000</i>
	<i>4,950,000</i>
	<i>1927 թ.</i>
	<i>465,000</i>
	<i>770,000</i>
	<i>1,100,000</i>
	<i>1,100,000</i>
	<i>3,435,000</i>

Այդ թվերը, անձնական հետազոտությունների հիման
վրա, հաղորդում ե վոչ այլ վոք, քան գաղութի նախկին

Ֆրանսիական վարչապետ Բրյուլը, վորք մի քանի խոշոր աշխատությունների հեղինակն և Ֆրանսիական Հասարակածային Աֆրիկայի մասին։ Աղյուսակից յերեսում և, վոր գաղութի ընդհանուր ազգաբնակչությունը 13 տարվա մեջ պակասել է 33%-ով։ Ամենից շատ վնասվել ե Գարոնը, վորք կարցրել է 56% և ապա Զադը, վորք կորցրել է իր ազգաբնակչության 34%-ը։

բ) ԽՆՁԹԵՍ Ե ՊԱՀՊԱՆՈՒՄ ԽՄՊԵՐԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՎԱՐ-
ՉՈՒԹՅՈՒՆԸ ՆԵԳՐԵՐԻ ԱՌԱՋՁՈՒԹՅՈՒՆԸ

Աղքաբնակչության արագ նվազումը, վոր նշանակում և
նաև բանվորական ուժի պակասելը, ստիպել և Փրանսիական
իշխանությանը նորերս զբաղվել նեղրական ազգաբնակչու-
թյան առողջացման խնդրով:

Քնեածության հիվանդության դեմ կովելու համար գաղ-
ղութի միջոցներից 1929 թվին հատկացված է 6.000.000
ֆրանկ՝ 90.000.000 ֆրանկ բյուջետային մուտքի դիմաց։
Պաշտոնական հաշվետվության համաձայն՝ «զդալի ջանքեր
դորձ դնելուց հետո», բժշկական անձնակազմի թիվը 1927
թվին հասցված է յերեսունշաբանի։ Այդ թվի մեջ քնեածու-
թյան դեմ կովելու համար կան տասն և յոթ հոգի։ Բժիշկ-
ների այդ չնչին քանակությունը պիտի սպասարկի մի յեր-
կիր, վորը 5 անդամ ավելի մեծ է, քան Ֆրանսիան և Վոր-
ունի յերեք և կես միլիոն ազգաբնակչություն։ Մինչդեռ այդ
ազգաբնակչության մեջ առողջ ժարդը հազվագյուտ յերեսույթ
է։ Նկատենք, վոր գաղութի մի քանի շրջաններ ամեն տարի
ուխահաջարկ են վճարում 800.000 և ավելի ֆրանկ և այնուա-
մենայնիվ նրանք վոչ մի ժամանակ բժիշկ չեն տեսել իրենց
հողի վրա։

ՑԵ-ցԵ ճանձը, վոր առաջ ե բերում մարդկանց մեջ քնիա-
ծության հիվանդությունը, արագությամբ վոչնչացնում ե
նաև անասուններին, վորի պատճառով համարյա անհնարին
և դառնոմ անասնաբուծությամբ պարապելը քնեածության
հիվանդության ծավալման ռայոնում։ Յեզ չնայած դրան,
ամբողջ ահազին դաշտում կա ընդամենը յերկու անաս-
նաբուժ։ Առողջապահության և անասնապահության ընդ-
հանուր ծախսը հազիկ թե կազմի 1929 թ. բյուջեի 9%-ը։

գ) ԻՆՉՊԵՍ Ե ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ԻՄՊԵՐԻԱԼԻԶՄԸ ՀՈՒՍԱՎՈ-
ՐՈՒՄ ՆԵԳՐԱԿԱՆ ՄԱՍՍԱՆԵՐԸ

Այժմ յերկու խոսք ել այն մասին, թե ինչպես ե լուսա-
վորում Փրանսիական վարչությունը նեղսերին։ 1924 թվին
դաղութում կային 18 յելլուպացի ռուսուցիչներ։ Այնուհետև
նրանց թիվը «աստիճանաբար ավելացել ե», ինչպես ասում
ե պաշտոնական հաշվատարության հեղինակը, մինչեւ 29-ի
(1927 թ.)։ Կային նաև 30 ընթիւներ, վորոնք մի քիչ սովորել
եին ֆրանսերեն լիդուն և նախապատրաստող ուսուցչի
պաշտօն եին վարում։ 1928 թվին ընդամենը կար 50 դպրոց
2.985 աշակերտով։ «Լուսավորության» բոլոր ծախսը նույն
տարում յեղել է 1.420.117 ֆրանկ, կամ, յեթե վոսկու
վերածենք՝ 250.000 ֆրանկ։ Զգալով, վոր այդ թիվը ծի-
ծաղելի յէ, նահանգապետը իր հաշվետվության մեջ ասում
է, վոր լուսավորության ծախսերը կամեն համաձայն «մեր
ֆինանսական դրության ամրացման»։ Նա ընդգծում է, վոր-
պես նշանակալից հաջողություն, վոր 1928 թվին լուսավո-
րության ծախսը բարձրացել է 364.961 ֆրանկով։ Ինչ խոսք,
«նվաճումը» բոլորովին անվիճելի յէ։

Տեղական գյուղական գպրոցի նպատակն ե սովորեցնել
նեղրերի յերեխաններին ֆրանսերեն «կոտրաել»։ Ասում ենք
«կոտրաել», վորովհետեւ դրել և կարդալ չեն սովորեցնում,
մինչեւու դասընթացը տեսում ե մեկ և նույնիսկ յերկու
տարի։

Մայրենի լեզուն իսպան վոնդված ե դպրոցական սիստե-
մից։ Այդ սիստեմը խիստ հակասում է ազգային լուսավո-

րության սովորական սիստեմին, վորը հիմնված է դպրոցնե-
րում հասարակական կյանքի լայնորեն զարգացման և աղ-
գային լեզուների կիրառման վրա։

Այդպես և Փրանսիական դաղությային մանկավարժական
ընդհանուր գրույթը։

դ) ՀԱՐԿԵՐԸ ՅԵՎ ՊԱՐՏԱԴԻՒՐ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

Այդպիսով՝ Փրանսիական կոռավարությունը բնիկներին
տալիս ե քիչ, շատ քիչ։ Այժմ տեսնենք, թե ինչ ե ստանում
նրանցից։ Ահա տվյալներ տեղացիներից ստացվող հիմնա-
կան հարկի՝ գլխահարկից՝ չափի մասին (1922 թվի տվյալ-
ներով)։

Գաբոն 7,50 — 10 ֆրանկ.

Միջին կոնգր . . . 3 — 5 — 7,5 — 10 ֆրանկ.

Զաղ 3 — 4 — 5 ֆր. աղամարդուց և 1 ֆր. կնոջից

Բացի գլխահարկից, տուրք ե վերցվում հողից, անասու-
նից, բնակարանից։

Այդ թվերի տեղացու տնտեսության մեջ ունեցող նշանա-
կության մասին վորոշ գաղափար կազմելու համար պետք ե
ասել, վոր յերկու որվա բենակրության (մի որ բեռը կրելը
և մի որ վերադառնալը) համար նա ստանում է 1 ֆր. · 25 սան-
տիմ, այն ել սեռությ իրենից է։ Ավելի ճիշտ տեղեկություն-
ներ մեզ հետաքրքրող հարցի մասին չենք կարող ներկայա-
ցնել՝ սեամորթների ընդհանուր բյուջեյի մասին տվյալներ
չունենալու պատճառով։ Գրքույկիս ամփոփման մեջ բեռում
ենք հատկած մի ճանապարհորդությունից, վորից ընթիւ-
ցովը պարզ գաղափար կազմի այն մասին, թե առհասարակ
ինչ նշանակություն ունեն ֆրանկները և պարտադիր աշխա-
տանքներից ստացված չնչին վարձատրությունը սեամորթի
բյուջեյի մեջ։

Տվյալների պակասությունը հարկային ծանրությունների
մասին վորոշ չափով փոխհաստուցվում է մի շարք թվերով,
վորոնք հասարակություն են տալիս մեզ եյական յեղակա-
ցություններ անելու այդ ծանրության աճման մասին։ 1928
թվի հաշվարկությունը հաղորդում է, վոր գլխահարկի

աճումը «ճշտորեն համապատասխանում և մեր դրամի անարժեք դառնալուն»; իսկապես. 1914 թվին գլխահարկ հավաքված և 4.605.000 ֆր., իսկ 1928 թ.—25.100.000 ֆր.: Դրանով նպատակ ունեն ցույց տալու, վոր հարկերը չեն ավելացել: Այդ կարեոր հարցի վրա արժե ավելի մանրամասնորեն կանգ առնել:

Նախ քան Ֆրանսիական Հասարակածային Սֆրիկայի հարկատվության և Փրանկի կուրսի ընթացքի կապը քննելը, հարկավոր և պարզել, վորչափ հնարավոր և, գաղութների տեղական տնտեսության յեկամուտային տենդենցիան: Կոնցեսիոն ընկերությունները գաղութում վարում են հափշտակողական տնտեսություն: Վերը արդեն ասացինք, վոր նրանք 1910 թվին արդեն ամբողջովին վոչնչացրել եյին փղերի ահագին յերամները: Այսպես վոր այժմ փղոսկը ճարելլ ալմազ ճարելուց հեշտ չե: Իսկ կառւչուկի ծառերի ավագակարարով վոչնչացումը Ֆրանսիական Հասարակածային Սֆրիկայում բոլորի բերանում ծամոն և դարձել: Յեզ վորովհետև կառւչուկի ծառի վոչնչացումը շարունակվում եր ավելի ուժգին պատերազմի տարիներում, այդ պատճառով ել յետպատերազմական 13 տարիների անհրաժեշտ աշխատանքը փղոսկը, կառւչուկի, արմավենու ընկուզի վորոշ քանակություն ձեռք բերելու համար պիտի չափազանց մեծանա: Դրա հետևանքով ել հենց աշխատանքի արտադրողականությունը տնտեսության այլ ճյուղի մեջ սաստկապես իջել ե: Հետեւաբար անտառի բնիկների տնտեսության յեկամտաբերությունն ևս վերջին 15 տարվա ընթացքում մեծ չափերով պետք ե ընկներ: Մեր ասածի ապացույցը մենք դանում ենք Փրանսիացի գրողի նկատողությունների մեջ, վոր նա արել և 1927 թվում իր ճանապարհորդության ժամանակ: Նեղբերին ծեծելը համբիո քաղաքում հետևանք եր այն բանին, վոր նրանք բավարար չափով կառւչուկ չեյին բերել:

Հեղինակը պատմում է.

«Այդ մարդիկ (նեղբերը—Դ. Լ.) վոչ մի կերպ չեյին աշխատում խուսափել աշխատանքից: Բայց նկատի առնելով

այն չափազանց մեծ տարածությունը, վորով նրանք պետք է հեռանային իրենց բնակության տեղից անտառի խիստ մեծ ավերման պատճառով (հաճախ նրանք ստիպված եյին խորասուղվել անտառի մեջ ութ որով՝ կառւչուկաբեր ճյուղեր գտնելու համար), նրանք ստիպված եյին ապրելու անտառում յերկու ամիս, վորպեսզի գտնելին հումուրիթի այն քանակը, վոր պետք ե տային կոնցեսիոն ընկերությանը»:

Այսպես ուրեմն, կոնցեսիոն ընկերությունների հափշտակությունների չնորհիվ անտառային տնտեսության յեկամուտները սաստիկ ընկել եյին: Մեր խոսքերը անտառային գոտու տնտեսության յեկամուտների անկման մասին ամբողջությամբ պետք ե վերագրել նաև մյուս գոտիների տեղական տնտեսությանը:

Վերը ասացինք, վոր կառւչուկի հումուրիթի և հավաքածու տնտեսության այլ բերքերի գները կոնցեսիոն տընտեսության ույոններում սահմանում և գաղութային վարչությունը: Վոր վերջինս մի գործիք ե ընկերությունների ձեռքին, — դա մենք ցույց տվինք մի շարք փաստերով: Մասնավորապես մենք տեսանք, վոր կառւչուկի հումուրիթի վարչությունից նշանակված գինը դաղութի ազատ շուկայի գներից մի քանի անդամ պակաս է: Թեև մենք տընդաներ չունենք նախապատերազմական կայուն գները ներկա գների հետ համեմատելու համար, բայց կարող ենք վճռականորեն հաստատել, վոր գաղութի վարչությունը չի յել աշխատել, վոր կայուն գները բարձրանան ֆրանկի անարձականության հետ միաժամանակ: Այսպիսով Փրանկի արժեքի ընկնելը յեղել ե մի լրացուցիչ ծանր հարկ նեղբերի մասսաների վրա, վորովհետև տեղական ապրանքների գների բարձրացումը բավական չափով յետ և մնացել դրամի արժեքի ընկնելու թափից և գնողները հնարավորություն են ունեցել եթան գնով ձեռք բերելու ապրանքներ, վճարելով անարժեք գարձած Փրանկներ:

Յեզ, վերջապես, քննվող հարցը պարզելու համար վճռական նշանակություն ունի ազգաբնակչության նվազումը, վոր մենք մանրամասն նկարագրեցինք վերը: Մնացած բոլոր

Հավասարաբժեք հանդամանքների շարքում միակ այդ փաստը ապացուցում է ազգաբնակչության հարկատվության չափազանց ուժեղացումը. հավաքած հարկի գումարը «լուսկու համեմատությամբ» մնացել է անփոփոխ, բայց հարկի յենթակա ազգաբնակչությունը այդ ժամանակաշրջանում նվազել է 33%-ով:

Այսպես ուրեմն. 1) կապիտալիստական ընկերությունների ավազակարարու տնտեսությունը և մասսաներին շահագործելը սաստիկ կրծատել են տեղացիների տնտեսության յեկամուտները, 2) դրամի արժեքի անկումը հանդիսանում է լրացուցիչ ծանր հարկ ազգաբնակչության համար և 3) հարկ վճարող մասսայի — նրա մահացման պատճառով — նվազելը նույնիսկ հարկերի գումարի եյական անփոփոխության դեպքում անվիճելի կերպով նշանակում է հարկային պրեսսի ճնշման ուժեղացումը՝ առանձնապես ամեն մի հարկատվի վերաբերմամբ:

Ի վերջո կարելի յե վորոշակի ասել, վոր Հասարակածային Աֆրիկայում «տիրապետող» Փրանսիական կապիտալի խլում և սեամորթ աշխատավորներից վոչ թե նրանց յեկամտի ավելցուկի մի մասը (կյանքի համար անհրաժեշտ քանակից ավելին), վոր առհասարակ չնչին բան ե, այլ նրանց աղքատիկ յեկամտի խոշորագույն մասը, վոր անհրաժեշտ ե նեղին և նրա ընտանիքին կյանքի պահպանության համար։ Վոչ մի կասկած չկա, վոր ազգաբնակչության հասպին մահացումը ինքնին (ուրիշ գործոնների շարքում) հանդիսանում է մեծ չափով հետևանք տեղացուն նրա կենսական մինիմումից դրկելուն — ծանր հարկերով նրան բեռնավորելու միջոցով։

Այն 90.000.000 Փրանկից, վոր իրեն հարկ գանձվում է համարյա բացառապես նեղրական ազգաբնակչությունից (գորովկետե յեվրոպացիներից ստացվող հարկերը հարկերի ընդհանուր գումարի չնչին մասն են կազմում), թեկուզ ամենաչնչին չափով տեղացիների համար ոգտակար նպատակների վրա ծախսվում է միմիայն մոտ 10—11%։ Բայց

այլ ել, ինչպես և բոլոր այլ հարկային յեկամուտները, ոգտագործվում են իշխանությունը ամրացնելու և բնիկներին շահագործելու միջոցները լայնացնելու համար։

յե) ԽՄՊԵՐԻԱԼԻԶՄԻ ԴԱՇԻՆՔԸ ՏԵՂԱԿԱՆ ՇԱՀԱԳՈՐԾՈՂՆ-ՆԵՐԻ ՀԵՏ

Բայց, կողոպտելով մասսաները, իմակերիալիզմը ամեն կերպ աշխատում է սիրաշահել տեղական ուսակցիան և շահագործողներին։ Ֆրանսիական հեղինակը այդպես ել ձևակերպում է այդ դրույթը։ «Հարկավոր չի մերկացնել տեղական առաջնորդներին, յեթե նրանք այդ չեն ցանկանում (կարծես թե նրանք կարող են ցանկանալ այդ։ — Դ. Լ.։)։ Պետք ե ձգտել ազգերու այդ ցեղապետների վրա... Պետք ե պարզել, թե ինչպես կարելի յե ոգտագործել նրանց, փոխանակ կռվելու նրանց հետ»։ Այդ կողմից հետաքրքրական ե 1928 թվի նորմուծությունը։ Դա կայանում է նրանում, վոր Ֆրանսիական Հասարակածային Աֆրիկայում հաստատվում են տեղացի դատավորներ։ Այս «նոտարլները», այսինքն իշխանիկները, առաջնորդները, ցեղապետները և այլն հրավիրվում են Փրանսիական վարչության կողմից «աշխատակցելու» հանրապետությանը գաղութի ժողովրդական մասսաները ստրկացնելու գործում։ Իշխանությունը, ինչպես յերեսում ե, զգում ե, վոր շահագործման թափը հասել և այնպիսի մի կետի, յերբ իր հետագա տիրապետությունը պահպանելու համար հարկավոր ե ամուր հենվել տեղական շահագործողների վրա։

Նախկին գլխում խոսվում եր, թե ինչպես գաղանարար շահագործում են բնիկներին կամիտալիստական ընկերությունները։ Այս գլխում խոսեցինք, թե ինչպես գաղութի պետական ապարատը կողոպտում է և վոչնչացնում ենեղբական մասսաները։ Այսաեղ տեղին կլինի բերել մի վերին առտիճանի բնորոշ կենցաղային դեպք, վորը պերճախոս կերպով պատկերացնում է քաղաքակրթություն տարածողների վերաբերմունքը նրանց «ինամքին» հանձնված սկ մարդկանց նկատմամբ։

գ) Մի ՇԱՏ «ԾԻԾԱՂԵԼԻ» ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Դեպքը տեղի յէ ունեցել 1928 թվի ամառը։ Ֆրանսիական աչքի ընկնող բուրժուական ժուրնալիստը, ճանապարհորդելով ապագա Բրազիլի-Ովկիանոս յերկաթուղու շրջանում, մի ժամով կանգ է առել Մադինգու ավանում։ Դա շրջանի կենտրոնն է։ Այստեղ կա Փրանսիական զինվորական պահականոց։ Դա պատճեշով շրջապատված մի փոքրիկ հրապարակ է, վորի վրա տեղավորված են մի քանի տնակներ։ Մեկում ապրում է պահականոցի կոմենդանտը—Փրանսիական սպան։ Մյուսում ապրում են մի խումբ սևամորթ հրացանաձիգ սենեգալցիներ*—դա պահականոցի գորքն է։ Բակի խորքում գտնվում է զինքի պահեստը և կենսամթերքների կրպակը։

Հյուրերի հաղլադյուտ լինելու սպատճառով այդ խուլ անկյունում, կոմենդանտը շատ ուրախացավ և հրավիրեց նրան ճաշի։ Յեվ այստեղ յեկվոր հյուրը վկա յեղավ՝ ինչպես ինքն և ասում, «մի փոքրիկ ծիծաղելի և խրատական տեսարանի»։ Այս նա ավելացնում է մի ուշադրավ նախադասություն։ «Հասարակական յեղակացությունը այդ տեսարանի առթիվ յստ թողնում եմ, վոր ուրիշները անեն»։

Պարոնները նոր եյին վերջացրել ճաշը։ Դուն մեջ հայտնվում ե սև կապրալ** Մուսայի յերկար հասակը։ Սևամորթը ձգվում է ամրող բոյով զինվորական կարգով, ձեռները ցած գցած, վոտները իրարուց հեռու։ Կոտրտված Փրանսիերեն լեզվով նա դիմում է սպային։

— Այստեղ շատ մարդեկ են յեղել և բերել են պատրաստ***։

— Ի՞նչ գումարի։

— Հինգ հարյուրի։

— Աչա փողը։ Դնա ինքը վերջացրու։

* Սենեգալը մի շրջան է Արևմտյան Աֆրիկայում։ Հաստրակածային բերդապահ զորքերը բաղկացած են հենց սևամորթներից։ Բայց դրանք ընդիներ չեն, այլ բերդած են Աֆրիկայի ուրիշ մասերից։ Նրանց պետքը ճերմակ սպաներ են։

** Կապրալը ունաեր-ովիցելն ե(յինթասպա)։

*** Պատաստը, ինչպես ասել ենք վերը, յերակային բոյով ե, մեր ճակրնեղի նման։

Մուսան դուրս է գնում գլխարկը ձեռքին, վորը լիքն և յերկու ֆրանկոց բրոնզյա դրամներով։ Ժուրնալիստը — նրա յետելից։ Մենք ել զնանք նրանց յետելից։ Պատճեշի առաջ կանդնած են հարյուրի չափ ներքուհիներ և յերեխաներ։ Յերեխաները բոլորն ել տկլոր են, իսկ մայրերը մի փաթթոցով ծածկել են իրենց ազդրները (այն ել վոչ բոլորը)։ Կոմանք նստած են ծալապատիկ, վոմանք ել չնթռած են փոշու վրա։ սպասում են «մեծին»։ Յյուրաքանչյուրի մոտ կա պատասի կապոց։ Տեսնելով կապրալին, բոլորը վեր են թռչում։

Հրամայողական շարժումով Մուսան պատվիրում ե նրանց շարքով կանդնել։ Բոլորը մի շարք են կազմում, պահանջելով իրենց առաջ պատասը։ Կապրալը համբ հայացքով նայում ե սև բանակին և մաքում հաշվում ե պատասը։ Զետողությունը յետ է դարձնում, խորածուղվում ե հաշիվների մեջ — ի՞նչքան տա ամեն մի հատին։ Հայտարարում ե։

— Պատասը արժի հինգ Փրանկ։ Յես տալիս եմ զույգին տասը Փրանկ։

Շարքը շարժվում է։ Ամեն մեկը մոտենում է Մուսային և դնում ե գետնին պատասը։ Ամեն մի զույգի համար կապրալը գլխակից ձգում է հինգ դրամ։ Ծախողները բռնում են ողի մեջ իրենց «եկվիվալենտը» (ապրանքին համազոր դրամը) կամ վերցնում են գետնի վրայից և ճանապարհում են գյուղը։ Բայց յերբ գլխարկը դատարկվում է, գուրս և գալիս — այդ քեզ անախորժություն — վոր յերեք տասնյակ ծառայողների համար փող չկա... խելոք զինվորը սխալիել ե հաշվելիս։ Զատացողները խոնարհությամբ կանդնած են և աչքերով ուտում են «մեծին»։ Մեծավորը հոնքերը կիտել ե, մրթմբթում է, շարանում է, հետո շուռ և գալիս գեղի կոմենդանտը և հայտնում ե նրան իր դարդը։ Զի՞տա արդյուք պարոն լեյտենանտը ելի դրամ։ Բայց բան դուրս չեկավ։ Լեյտենանտը միայն բարկացրավ։

— Զորս Փրանկ տուր ամեն մի պատասին։ Զորս Փրանկ տուր։ Սկսիր նորից։

Մի քանի զինվորներ ուղարկվում են գյուղը։ Կես ժամ՝ չանցած բոլոր կանայք և յերեխաները, վորոնք ժախել ելին պատառը, նորից կանգնած ելին շարքով մեծավորի առաջ։ Փողերը իւեցին նրանցից և նորից լցրին գլխարկի մեջ։ Կիսատկլոր և տկլոր նեղրերը լուռ չուռմ են աչքերը զինվորի տարագ հաղած նեղրի վրա։ Կապրալը խախտում է լոռեթյունը։

— Պատառը արժե չորս ֆրանկ։ Յես տալիս եմ չորս ֆրանկ։

Նորից ձգվեց սև հերթը։ Մուսան արդեն ձգում է յերկու հատ յերկու ֆրանկնոցներ ամեն մի պատասի համար։ Մտացողները գլխիկոր հեռանում են իրար յետևից, բայց յերբ գլխարկը դատարկվեց, — նորից դժբախտություն՝ տասնյակ ձեռքերի համար փող չեր մնացել։

Մուսան նորից դիմում է կոմենդանտին։ Նա սաստիկ բնկճված է, ելի փողը հերիք չարավ։ Կարելի յեն նորին աղնվապատվությունը կրաքեհաճի՞ մի հիսուն ֆրանկ ել բաց թողնել։

Պատասխանի փոխարեն նորին աղնվապատվությունը կատաղած գուռում է։

— Ապո՛ւշ, տուր յերեք ֆրանկ հիսուն սանտիմ։

Նորից զինվորները ուղարկվում են գյուղը։ Նորից կանաց և յերեխաների խոնարհ նախիրը յետ և դառնում։ Փողերը յետ են ածում գլխարկի մեջ։ Նորից իրարու յեն սեղմում և նայում են կարծիր գլխարկ ծածկած սև մարդուն։ Իսկ այդ մարդը դժվարին դրության մեջ է։ Ի՞նչպես դուրս գալ այդ դժվարին կացությունից, իսկապես, նա միայն յերկու ֆրանկնոց դրամներ ունի, իսկ վճարել հարկավոր և ամեն մեկին յոթ ֆրանկ (ամեն մի ծախող միջին թվով բներել և յերկու պատաս)։ Մտածության մեջ ընկալ այդ պատասխանտում մարդը . . . Եել հանկարծ նրա դեմքը փայլեց։ Ցելքը, և այն ել փայլուն յելքը, գտել է։ Ուրախութախ կանչում է։

— Պատառը արժե յերեք ֆրանկ։ Յես տալիս եմ զույգին վեց ֆրանկ։

Ամեն ժեկին Մուսան չպրտում է յերեքական յերկու ֆրանկնոց դրամ։ Աշխատանքը կատարվում է արագ և լավ։ Ամբողջ շարքը վաղելով անցնում է Մուսայի մոտից։ Յեկի յերբ վերջին ծախողը հեռացավ գյուղը, Մուսան ուրախագին ծիծաղեց։ գլխարկի մեջ մի ամբողջ կույտ դրամ եր մնացել։

Ուրախությունից փայլելով նա գնաց կոմենդանտի մոտ հաղորդելու նրան իր հասրադիտության մասին։

Ինչ ասել կուղի, շատ «ծիծաղելի» պատմություն է։ Կատարյալ զվարճություն է։ Բայց հարգելի ժուրնալիստը ձիշտ է բնորոշել այդ տեսարանը, անվանելով այն «խրատական»։ Սակայն փոխանակ պարզելու, թե ինչի մեջ է կայանում այդ խրատականությունը, նա ամաչելով աչքերը ցած և գցում։ Իսկ մենք հիմք չունենք մեր յեղակացությունները չանելու այդ չափազանց գարշելի պատմությունից, վորը վկայում է հարյուրավոր սկամորթ հողագործների կողոպատմելու մասին, յերբ ֆրանսիական իշխանությունը գնում է նրանցից մթերքներ։

1) Եեվրոպական քաղաքակրթողները Հասարակածային Աֆրիկայի բնիկներին դրել են անլեզու անասունների դրության մեջ։

2) Նույնիսկ ֆրանսիական իշխանության բոլորովին պաշտոնական ներկայացուցիչները չեն քաշվում նեղրերին կողոպատմելու մասին, յերբ ֆրանսիական իշխանությունը գնում է նրանցից մթերքներ։

6. ՆԵԳՐԵՐԻ ՀԱԿԱՄՈՒՐԻԱԼԻՍԱԿԱՆ ԱՊՍԱՄՔԻԹՅՈՒՆՆԵՐԸ

ա) ՆԵԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԸ 1921 — 1930 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

Ֆրանսիական թալանչիների ճնշմանը նեղրազան ազգաբնակչությունը պատասխանում է ապստամբական յելութեալով, վորոնք յերբեմն տեական բնույթ են կրում։ Տեղեկություններ այդ անցքերի մասին շատ քիչ են համարում Յեկի պատմային։ Մեր տեղեկություններն են Ֆրանսիական Հասարակածային Աֆրիկայում տեղի ունեցող վերջին ապստամ-


բությանների մասին չափազանց սահմանափակ են : Համաշը՝ խարհային և ֆրանսիական մամուլի կարծառությունները — ահա ամբողջ ինքորմացիան :

Այդ նյութերից յերեսում ե, վոր 1921—1928 թվականներում յեղել են վոչ թե մեկ, այլ ամբողջ չորս դդալի հակա- Փրանսիական յելույթներ : Բացի գրանից 1930 թ. ապրիլին տեղի յե ունեցել նոր յելույթ, վորի մասին հիշել ենք մեր ներածության մեջ :

Միակ բանը, վոր մենք գիտենք այդ անցքերից առաջինի մասին, վոր տեղի յե ունեցել 1921 թվին, այն ե, վոր հինգ սկ պահապաններ («միլիցիոներներ») — պաշտօնապես այդպես են կոչվում նրանք) գալիս են վերին Սանդա գետի ուայոնը (Ուբանդի-Շարի շրջան), այնտեղ նրանց տեղացիները սպանում են և, իբր թե մինչև անգամ ուսում են նրանց : Ինչ բնույթ եր կրում այդ յերեսույթը, ծավալվել ե արդյոք ավելի լայնորեն, ի՞նչ ե նստել նեղերին և իմպերիալիզմին դա խաղաղացումը — այդպես ել անհայտ ե մնացել :

1927 թվի պաշտոնական հաշվետվությունից իմանում ենք, վոր «վոչ մի լուրջ խլբում 1927 թվին չի յեղել, վորովհետև չի կարելի խլբում անվանել միլիցիոներների վեճը Բանդի քաղաքում, վորը ընդհանուր կարգի վերաբերմաբ լուրջ հետևանքներ չի ունեցել և կամ չափազանց սահմանափակված մի բոնկումն Ուբանդի-Շարի շրջանում մի առաջնորդի զեկավարությամբ, վորը մի քանի շաբաթվա մեջ խաղաղացվեց : Թե ինչի մեջն եյին կայանում այդ հուղմունքները, վորոնց խաղաղացնելու համար հարկավոր ե յեղել «մի քանի շաբաթ», և մնացած հարցերը, վորոնք կազ ունեն այդ անցքերի հետ, — այդ մասին վոչ մի խոսք չի ասված :

Ֆրանսիական Հասարակածային Ա.Փրիկայում 1928 թվին տեղի ունեցած հակաֆրանսիական բոնկման մասին առաջին տեղեկությունները ստացել են Պարիզի պարլամենտական շրջանները նույն թվի դեկտեմբերին : Այդ տեղեկությունները հաղորդում եյին, վոր 1928 թ. ամառը սկսվել ե ապամրություն վերին Սանդա գետի ուայոնում : Ապա վոտի յե



ԲԺՇԿԵՐԻ ՏԱՐՅԱՐ — ԾՐԱՐՆԻ - ՀԱՐԳԻԱՅ

կանդնել յերկրի կենտրոնական ամբողջ շրջանի աղղարմակչությունը (Զագի հարավային մասը, Միջին Կոնդոյի մասերը, Ռէբանդի-Շարի մասերը) մինչև Կամերունի սահմանները: Ապստամբները սպանում եյին յերզոպացիներին, քանդում եյին ճանապարհներն ու կամուրջները, կողոպառում եյին յերզապահական ընկերությունների կրպակներն ու պահեստները:

1929 թ. հունվար-փետրվար ամիսներին վարչությունը ուղարկեց սևամորթ ջոկատներ ֆրանսական սպաների հրամանատարությամբ ապստամբությունը ճնշելու համար: Տեղեկություններ կան, վոր պատժող ջոկատներին հրամայված և «խոռվարաբներին ամենածանր կորուստ հասցնել»: Յեթե այդ հրամանը թարգմանենք ցարական ժամանակի սուս բյուրոկրատիայի լեզվով, կտանանք 1905 թվականի հեղափոխության դահլիճ Տրեպովի նշանալոր կարգադրությունը՝ «Պատրոններ չխնայել»: Յեկ սպաները կատարեցին հրամանը: Մի լեյտենանտ, կվեն ազգանունով, այրել և մոռ հիսուն դրամ Մրակի-Կարնո ճանապարհի վրա, լեյտենանտ Կորդյին սպանել և հիսուն բնիկներ Մնախո գետի ուայրնում: Մինդուլ գավառում 1929 թվին ապրիլի սկզբում վոչչացել և կալանավորվել են մոտ հազար բնիկներ, իսկ Ֆորտ-Արշամբո քաղաքում, վորը Զադի շրջանի կենտրոնն ե, 1929 թվի հուլիսին կալանավորվածների թիվը հասնում եր 5·000-ի:

Այժմ տեսնենք, թե ինչպես ե անդրադարձել ապստամբությունը դադութի նահանգապետի հաղորդագրությունների մեջ:

1928 թվի դադութային հաշվետվության մեջ կարդում ենք: «Լույի ուայրնում (Զագի գավառ) 1927 թվին և Սանդի գետի վերին հոսանքի ուայրնում 1928 թվին յերեացել են իրկու մարդարե - կախարդներ: Նրանք հայտնել են, վոր իրենց հրաշագոր չնորքով նրանք կարող են արտաքսել յերկրից ճերմակներին... Լույի ուայրնում շարժումը արագությամբ ճնշվեց կախարդի կալանավորումով: Իսկ Վերին Սանդայի շրջանում շարժումը ստացավ բավականաչափ լայն ծավալ»: Ֆրանսիական մի լրագիր հաղորդում է ավելի լրիվ

մանրամասնություններ վերին Սանդայի վրա կատարվող անցքերի մասին: Համաձայն այդ տեղեկությունների, Վերին Սանդայի մարզարեն, կարինու անունով, մեծ աղղեցություն է ձեռք բերել ցեղակիցների վրա իր ճգնավորական կյանքով և ինքն իրեն տահջանքների մատնելով: Քաղցի և զրկանքների միջոցով նա հասցրել է իրեն նյարդային սաստիկ գրգռման: Նա համոզել է անտառի մնացած «զավակներին», վոր ինքն ունի մի հրաշալի ափսե: Զրով լցնելով այդ ափսեն, նա նրա մեջ տեսնում է այն ամենը, ինչ վոր անում են ճերմակները, իսկ յեթե նստի թռչող նստարանի վրա, նա կարող է անտառի վրայով թռչել ճերմակների բանակը և իր հայացքով վոչչացնել նրանց: Նա կարող է ճերմակ մարդկանց գարձնել գորիներ (կապիկ) և վոնդել յերկրից: Կախարդը իր ուժը ստացել է, ինչպես ինքն է ասում, սպանելով ճերմակ մարդուն և ուտելով նրա սիրտը (չափազանց բնորոշ և այդ):

Յերբ 1928 թվի ամառը Վերին Սանդայի ուայրնում յերեաց վինդուների ջոկատը գյուղացիներին յերկաթուղային աշխատանքներին տանելու համար, կարինուն հայանվեց հուզված ամրոխի առաջ և սկսեց կոչել ցեղակիցներին, վոր նրանք հարկ չտան ճերմակներին, չտան հաց, ջուր, կրակ և առհապարակ չհպատակվեն նրանց: Նա խոստանում է, վոր դրանից հետո կգա առան բերքերի, հաջող վորսերի և ժկնորսության ժամանակը: Այդ յելույթը, ըստ յերեսույթին, յեղավ ազգանշան ապստամբության, վորը տարածվեց այնուհետև ամբողջ կենտրոնական շրջանում մինչև Կամերունի սահմանները:

Կարիք չկա ասելու, վոր այդ մարդարեները միայն սեամորթ մասսայի բոլորի արտահայտության կաղմակերպողներն են: Իսկ ապստամբության պատճառն այն յուրատեսակ ստրկությունն է, վոր Փրանսիացիները մտցրել են գաղութի մեջ: Ապստամբությանը առիթ է տվել հերթական բանվորահավաքը՝ աշխատելու համար բնիկների «մահվան արհեստանոցներում», — յերկաթուղու կառուցման վրա:

Վորագեսղի թեկուղ մի փոքր չափով հասկանանք 1928 — 1929 թ. թ. ապստամբության պատճառները, պետք ե հիշենք ապստամբության ռայոնի բնորոշ առանձնահատկությունները: Սանդա գետի (Վորը թափվում ե Կոնդո գետի մեջ) ջրամբարի անտառը — ապստամբության կենտրոնը — չատ հարուստ ե կառուչուկի ծառերով և արմավենիներով: Բացի դրանից, Սանձա գետը յերկրի այն սակավարիկ գետերից մեկն ե, վոր մեծ տարածության վրա նավագնացության հարմար ե: Այդ առավելությունը չափազանց կարևոր է: Կառուչուկով հարուստ ռայոններ չատ կան գաղութում, բայց չատ քիչ տեղեր կան, վորոնք ունենան հաղորդակցության այնպիսի ճանապարհներ, ինչպես Սանդայի ջրամբարն է: Այդ ռայոնի արժեքի մասին Փրանսիական գաղութային գործիչների համար՝ կարելի յե զատել հետեւյալ փաստերից: Ֆրանսիական Հասարակածային Ա.Փրիկան շահագործող քառասուն ընկերություններից իննը գործում են Սանձա գետի ռայոնում: Հսկայական անտառային «Սանձա-Ռոբանդի» ընկերությունը, վորի կոնցեսիոն հրապարակը հավասար է 17.000.000 հեկտարի, զլիսալորապես գործում ե այստեղ: Վերջապես հավանական ե, վոր այդ ռայոնում «գործում են» և ուրիշ ընկերություններ, կարելի յե նաև՝ վոչ Փրանսիական, վորոնք վերը հիշված չեն: Այնպես վոր այդ ռայոնի ազգաբնակչության շահագործությունը խիստ անողոք ե:

Իսկ այդ շահագործության արդյունքները վերջին տարիները փայլուն չեն: Կառուչուկի վայրի ծառը ավելի վատ բերք ե տալիս, քան կուլտուրականը, ուստի Յավայի, Բրազիլիայի և այլ բերքերի մրցությունը տարեցտարի իջեցնում ե Ֆրանսիական Հասարակածային Ա.Փրիկայի նեղերի մատակարարած հումույթի գները: Ամենավերջին տարիների ընթացքում կառուչուկի հումույթի գինը աղատ լրջանառության մեջ ընկել է 14 Փրանկից 7-ի մի կիլոյի համար: Մինչեռ, ինչպես մենք տեսանք, այդ բերքի արտահանությունը նկարագրված պատճառներով չի ավելանում, չնա-

յած ամեն տեսակ միջոցառումներին, ինչպես Բամբիո քաղաքի վարչապետի գործ դրած միջոցն եր: Բոլորովին պարզ է, վոր այդ պայմաններում «Շործերը» շատ վատ պիտի լինեն: Հիբավի, հիշած ընկերության ներկայացուցիչները գանգատվում են, վոր տասն և վեց տարվա մեջ ընկերությունը տվել ե իր փայտաբերերին ամենաշնչին շահ:

Այնուհետև չափազանց կարեւոր ե հաշվի առնել հետեւյալ հանդամանքը: Խոշոր կոնցեսիաների ժամկետը լրանում ե 1929 թվի դեկտեմբերի 1-ին: Ինչպես վերը նկատեցինք, կոնցեսիոն արտոնությունների առաջվա ծալալով յերկարացնելու հույսերը շատ թույլ են: Կարելի յե չկասկածել, վոր կառավարությունը ընկերությունների սիրու չի կոտրի, բայց այնուամենայինիվ յերկրի և աղջաբնակչության շահադործության թափը կնվազի: Վորովհետեւ պատերազմների և հեղափոխությունների դարաշրջանը չի թույլ տալիս բաժանելու Պարիզի կապիտալիստական ասպեկտներին տասնյակ միլիոնավոր հեկտար հող կենդանի ինվենտարի հետ միանին — այսինքն տասնյակ հազարավոր նեղերը: Ուստի բնական ե, վոր ընկերությունները ձգտում են վերջին որերում հիմնալորապես մաքրել յերկիրը և նրա բոլոր անկյունները, իսկ ուսամորթ դյուզացուց յոթ կաշի մաշկել:

Այն շրջանը, վորտեղ սկսվել ե ապստամբությունը, լրագրների ասելով, Սանձայի ջրամբարի մեջ «արջի անկյուն» ե ներկայացնում: Նա շրջանի կենտրոնից մի կողմն ե ընկած: Նրա այդ նվազ մատչելիությունն ե յեղել պատճառը, ինչպես յերեսը ե, վոր բնակչությունը ուժեղապես չի զգացել Փրանսիական ճնշումը: Իսկ յերբ գործերի սաստիկ վատանալը և կոնցեսիոն գեղեցիկ որերի վախճանի մոտենալը ձգտում առաջ բերին հնարավոր չափով շատ աշխատանք և բերքեր դուրս քաշել քաղաքակրթական մարդասիրության անսովոր բնակչությունից, այն ժամանակ բնականարար ծագեց ապստամբությունը:

Եերկրորդ ապստամբության, վոր տեղի յե ունեցել նույն թվի ապրիլի սկզբներին, դբդիչ ուժեղը մասին տվյալներ չկան: Նշենք միայն հետեւյալը:

Գրքույկիս ներածության մեջ բերած յերկրորդ հեռագրի
մեջ անձ չտություն կա: «Ներքին կոնզո» կոչվում և վոչ թե
Բրազավիլի մոտ գտնվող ավանը, այլ ամբողջ շրջանը, վոր-
տեղ գտնվում ե նույն ինքը Բրազավիլը, գաղութի մայրա-
քաղաքը և հեռագրի մեջ հիշված արվարձանը: Այդ արվար-
ձանը կոչվում ե իսկապես «Պոտո-Պոտո»: Ընթերցողը հեշ-
տությամբ կարող ե պատկերացնել, թե ինչ ե ներկայա-
ցնում գաղութի մայրաքաղաքի բնիկների այդ արվարձանը:
Դրա համար բավական ե արվարձանի անունը նեգրերենից
հայերեն թարգմանել: «Պոտո-պոտո» նշանակում ե կեղտ,
լողում անանցանելի ցեխ, աղբանոց: Ասել կուզե՝ այդ
անունը լիովին հիմնավորված ե: Հիրավի, նեգրերի բանվո-
րական ավանի համար Փրանսիական վարչությունը հատկա-
ցրել ե Բրազավիլի տակ գեռ կարգին չչորացած ճահճը:
Այստեղ ապրում են սևամորթ աշխատավորները, վորոնք
ստեղծում են Փրանսիական գաղութային մայրաքաղաքի հա-
մար բոլոր հարստությունները. բանվորները, շինարարները,
բեռնակիրները և այլն: Լիովին հասկանալի յի, թե ինչու
հենց այդ բանվորական ավանումն ե գտնվում հակաֆրան-
սիական շարժման կենտրոնը:

ԱՄՓՈՓՈՒՄՆ

Յեզրակացուրյուններ: Մի «պատմություն» ևս, վորք
ամենամին ծիծաղելի չե:

Բերած փաստերը տալիս են Փրանսիական խոշոր կապե-
տալի և նրա պետական իշխանության գաղութային գոր-
ծնելության ցայտուն պատկերը Ֆրանսիական Հասարակա-
ծային Աֆրիկայում: Այդ փաստերը ապացուցում են կա-
տարյալ կերպով, վոր Փրանսիական կապիտալը ստեղծել ե
բնիկների համար համարյա ստրկական ռեժիմ և վոչնչա-
ցնում ե յերկրի աղբաբնակչությունը և արտադրական ուժը:
Այդ փաստերի հանդեպ Ֆրանսիայի իմակերիալիստական քա-
ղաքականությունը հանդես ե գալիս վորպես հրյուսակը 1928
թվին կայացած II ինտերնացիոնալի կոնգրեսի պնդում-
ների անարդարացիության զարմանալի ապացույց այն մա-
սին, թե կապիտալիզմը նպաստում ե գաղութների արտա-
դրական ուժերի զարգացմանը: Ֆրանսիական տիրապետու-
թյան քառասուն տարին Ֆրանսիական Հասարակածային Աֆ-
րիկայում յեղել ե նեգրական մասսաների այլասեռման և յեր-
կրի տնտեսական հարստությունների ավագակաբարու յու-
րացման ժամանակաշրջան:

Վերջացնենք մեր աշխատությունը, բերելով մի հատված
Փրանսիական շատ նշանավոր գրող Անդրե Ժիդի «Վերադարձ
Զադից» գրքից: Այդ հատվածը գիտական աշխատություն-
ների շատ եներից ավելի փայլում կերպով բնորոշում ե տե-
ղական աղբաբնակչության տնտեսական մակարդակը և Ֆրան-
սիայի քաղաքակրթական աշխատանքի արդյունքները Հասա-

բակածային Աֆրիկայում : Հեղինակը պատմում է , թե ինչպես են բաժանվել և հաջիվսեր տեսել մի խումբ բեռնակիրների հետ , վորոնք ոլարտադիր կերպով կրել են նրա բագաժը մի վայրեց մյուսը :

«Արձակում ենք մեր բեռնակիրներին : Ամեն մեկը ստանում է 12 ֆրակ : Հերթով մոտենում են նրանք և յես տալիս եմ նրանցից յուրաքանչյուրին յերկուական հինգ ֆրանկնոց թղթադրամ և չորսական արծաթ փող՝ ամեն մեկը 50 սանտիմ : Բայց այդ խեղճերը հասկացողություն չունեն , թե վորքան են վաստակել և ինչքան են ստանում : Ինձ թվաց , վոր բոլորն ել , առանց բացառության , ապչել են ստացած գումարի քանակության խոշորությունից , բայց վոր փոքրիկ արծաթ դրամները նրանց վրա ավելի մեծ տպավորություն գործեցին , քան թղթադրամները : Յես պատրաստ եմ մինչև անդամ հաստատելու , վոր յեթե առաջարկեցի նրանց ընտրություն կատարել այդ յերկու դրամների միջև , մեծամասնությունը կվերցներ արծաթե դրամները :

Մաքովս անցավ մի հետաքրքիր փորձ կատարել և յես կատարեցի այն յերեք անդամ և յերեք անդամն ել միենույն արդյունքը ստացվեց : Յես բաց եյի թողնում ինձ պարզված ձեռքի մեջ թղթադրամ և միայն յերկու արծաթ դրամ . խեղճը վազում ե ուրախ դեմքով և յես ստիպված եյի լինում յետ կանչել նրան , վորպեսզի վարձի մյուս մասն ել տամ :

Այդ բանը հիմք և տալիս ինձ ասելու , վոր նեգրերը բոլորովին անողնական են գործնական կյանքի մեջ և ամբողջովին կախված են շահագործողների կամայականությունից : Կարելի յե յերևակայել , թե ինչ չափերով են ողտագործում վաճառականները տեղական այդ բարեհաջող պայմանները : «Աւամորթները բավականանում են քով , ի՞նչ կարիք ի տիրու տնդր փող ծախսելու» :

Յես հարցրի նրանց թարգմանչի միջոցով , թե ի՞նչ պետք ե անեն նրանք իրենց հարստությունը : « Անի թե հարթեցողության մաս չույզեն : — Ո՛ , վոչ : և ամի թղթադրամ նրանք իրական հարկը վճարելու համար » : — Բայց չո՞ւ վոր

հարկը նոր ե վճարված : — « Ճիշտ ե , բայց նրանք կպահեն այդ թղթադրամները մինչև հետադա տարին » . . .

Թափառում ենք գյուղում : Նեղ փողոցները ընկած են հարդից հյուսվածք պատերի մեջ : Անընդհատ շարժում կայնտեղ : Կանայք յերկար շարքերով շտապում են ջուր բերելու կամ վերադառնում են ջրով : Յերբ մեզ տեսան , փողոցները դատարկվեցին , յերիխաները բագնվեցին , կանայք յերեսները շուր տվին , իսկ նրանք , վորոնն չեյին կարող քագնվել , սառած կամգ առան իրենց տեղերում , շիամարձակվելով շարժվել և աշբերը բարձրացնելով » :

Նեգրական մասսաների այդ սարսափը սպիտակ մարդու հանդեպ փայլուն զնահատությունն ե գաղութի ֆրանսիական տերերի , վորպես կատաղի սորկացնողների և անողոք շահագործողների , դերի :



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	հջ
ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	3
1. Տերիտորիան և ազգաբնակչությունը	5
2. Տնտեսության ձևերը և հասարակակարգը	7
3. Աշխատանքի պրոբլեմը ֆրանսիական Հասարակածային Աֆրիկայում	10
ա) Բանվորական ձեռքերի պակասությունը գյուղում և դրա պատճառը	10
բ) Ինչպես և «լուծվում» աշխատանքի պրոբլեմը ֆրանսիական Հասարակածային Աֆրիկայում	14
4. Կապիտալիստական արշավը ֆրանսիական Հասարակածային Աֆրիկայում	19
ա) Կոնցենտրոն ընկերությունները	19
բ) Բրազավիլ-Ովկիանոս յերկաթուղու կառուցումը	32
5. Գաղութային վարչության տեղական քաղաքականությունը և նեղրական մասսաների գրությունը	43
ա) Ազգաբնակչության աճումը	43
բ) Ինչպես և սլահպանում իմպերիալիստական վարչությունը նեղրական մասսաները	47
շ) Ինչպես և ֆրանսիական լիմպերիալիզմը «լուսավորում» նեղրական մասսաները	48
տ) Հարկերը և պարտադիր աշխատանքները	49
յե) Իմպերիալիզմի դաշինքը տեղական շահագործողների հետ	53
զ) Մի շատ «ծիծաղելի» պատմություն	54
6. Նեղրական հակախմակերիալիստական ապստամբությունները	57
ա) Նեղրական շարժումները 1924—30 թվականներին	57
բ) 1928—30 թ.թ. ապստամբության պատճառները	62
Ա.Մ.ՓՈՓՈՒՄՆԵ, Յեղրակացություններ, Մի «պատմություն» ևս, վորը ամենեին ծիծաղելի չե	65

ՀՀ Ազգային գրադարան



NL0196211

327.2
L - 33